Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՇԱՀ-ՊԱՐՈՆ

„ԱՆՏՈՆ ՍԻՄՈՆԻՉ"

Դրամա չորս գործողութեամբ

891.99
Շ-24

ԹԻՖԼԻՍ
Էլեկտրական Տպարան «ՀԱՅՐԱՊԱՏ» ընկ.
Մադաթեան փող. № 15
(107)

№45
891.99
Շ-24
19 NOV 2011

ՇԱՀ-ՊԱՐՈՆ

„ԱՆՏՈՆ ՍԻՄՈՆԻՉ“

Դրամա չորս գործողությամբ

ԹԻՖԼԻՍ
Էլեֆտրաբարձ Տպարան «ՀԵՐՄԷՍ» ԸՆԿ.
Մադաթեան փող. № 15
(107)

ՀՈՍ ՍՍՌ ԳԱ

Дозволено Цензурою 13 мая 1905 г. г. Тифлисъ.

ՀԱՅԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Ա. Մասիսյանի անվան
21291-59

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Անտոն Սիմոնիչ.—50 ամեայ, հնամաշ, կարկատած եւրոպական շորեր, գլխին ստորին աստիճանաւորի հին գլխարկ կակարտով. լղար, ալեխառն մազերով, պռոշների մօտ խուզած բեխերով, մորուքը վեր արած։

Մարթա.—Սրա կինը, 40—45 տարեկան, հին, կարկատած, բայց վերին աստիճանի մաքուր, Ախալքալաքի կանացի շորեր։

Սաթենիկ.—Սրանց աղջիկը, 18—20 տարեկան, պարզ, հնոտ և մաքուր եւրոպական շորեր։

Միսակ.—Նոյնպէս սրանց որդին, 20—22 տարեկան, հիւանդ, վերին աստիճանի դժգոյն, միշտ հազում է, նոյնպէս հագած ունի կիսամաշ եւրոպական շորեր, գլխին ֆուրաշկայ։

Աշոտ.—Երիտասարդ, առողջ, մաքուր, եւրոպական նոր շորեր։

Հաջի-Փիլոս.—Հարուստ գիւղացի, 60 տարեկան, կոշտ դէմագծերով, կոշտ, ալեխառն մազեր, գլխին թանգագին մորթեայ գլխարկ, հաստ, մութ կարմիր շալից չուխայ (գիւղական չերքեսկայ), տակից արծաթեայ կոճակներով իշլիկ, որը կոճկուած չէ, հաստ քիրման գօտի, կարմիր

հաստ շալից անդրավարտիկ, գօտկում հաստ ծխամորճ, ոտներին պոչերով ոտնամաններ։

Վկայ.—40 տարեկան, կիսաեւրոպական, կիսաասիական շորեր, գլխին ֆուրաշկայ։

Դատախազ.—Պաշտօնական շորեր։

Ոստիկաններ.—Նոյնպէս պաշտօնական շորեր։

Զինուոր.—Զինուորական շորեր, առանց զէնքի։

Անտօնի երկու փոքր տղան.—Նիհար, հիւանդոտ, հագած են կարկատած աշակերտական շորեր։

Ա. ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Տեսարանը ներկայացնում է մի հասարակ սենեակ. պատերը սպիտակացրած են կրով, սենեակի աջ կողմը դրուած է մի հասարակ սեղան իր հին սփռոցով, որի վրայ կայ մի հասարակ գրիչ, մի կոտրուած թանաքաման և մի ~~անպար~~ լամպար. այս ու այն կողմը երևում են մի երկու հին աթոռներ, նոյնպէս սեղանի վրայ թափթփուած են թղթեր. ձախ կողմը երևում է մի յետ երկաթապատ սնդուկ, որը փակուած է երեք հատ մեծ կողպանքով. սնդուկի դէմ ու դէմ դրուած է մի հին բազմոց. երկու դուռ է բացւում, մէկը բեմի դէմից, իսկ միւսը աջ կողմից. ձախ կողմը կայ երկու պատուհան։

ՏԵՍԻԼ 1.

Անտօն Սիմօնիչ միայնակ

ԱՆՏՕՆ. (Կանգնած սնդուկի մօտ)։ Ա՜յ, այ, այ... Դէ արի ու ապրի. դեռ երէկ էր զինուորից մի ամբողջ հաց առայ, այսօր արդէն չկայ... Էն էլ ինչ հաց, համարեա տասը ֆունտից աւել էր, իսկ յետոյ՝ ես, կինս, չորս հատ էլ երեխայք— վեց հոգի, ասել է ֆունտ ու կէսից, կանէ ինը

ֆունտ, դեռ մի ֆունտ էլ աւել... էս ուր կերթայ, եթէ ամէն օր տասը ֆունտ հաց ուտեն. դեռ լաւ է, որ տեղս զօրք կայ, ֆունտը մի կոպէկի հաց ենք առնում, եթէ տեղական հացթուխներից առնենք՝ ուղղակի կքանդուենք... Է, աշխարհ. ես յիշում եմ, երբ որ ես փոքր էի, տասը կոպէկի մի ամբողջ տուն էր կառավարում, իսկ այժմ... տասը կոպէկի միայն հաց ենուտում. դէ դրանց շոր, կոշիկ, նաւթ, փայտ, մի խօսքով, որ մէկն ասեմ, ապրելը դժուարացել է... (Գրիչը վերցնելով եւ ցասկոտ նորից սեղանի վրայ շպրտելով)։ Էս անիծածն էլ քանի գնաց էժանացաւ՝ առաջ Անտօն Սիմօնիչը միայն ինքն էր, իսկ այժմ երեկեան հորթուկը խնդիր է գրում, փաստաբանութիւն անում և ինչ գնով... մի ռուբլի, երկու ռուբլի, շատ շատ հինգ ռուբլի... Իսկ առաջ... հէյ, մի հասցէ գրելու համար առնում էի մի ռուբլի, դեռ գիւղացու վրայ էլ պարտականութիւն էի դնում, որ միւս գալուն սեր ընծայ բերէ... Գաւառապետի մօտ թարգմանութեան գնալու համար հինգ ռուբլի էի առնում և մի գլուխ պանիր... Եղբայր, այն ժամանակ թէ փող էի վաստակում և թէ գիւղացիների բերած ընծաներով էլ տուն էի կառավարում. թէ չէ ես ո՞րտեղից պէտք է հաւաքէի քսան հազար ռուբլի, խօ Մքօն չէ գործել. դէ մարդ կասեմ, եթէ այժմս էլ մէկը գրագրութեամբ այդքան փող դիզէ։ (Զոգում է սնդուկի առաջ, ելաց է անում եւ դող դող այնտեղից դուրս հանելով տոմսերը, երկիւղածութեամբ վեր է բարձրացնում)։ Վայ ես սրանց կարմրուն հոգուն մեռնեմ... Սրբութիւն սրբոց... (Ցնտոյ հաշվում է, երեսին քսում, կրծքին սեղմում, կողպանքները ամուր քաշում, խաչակնքում եւ վեր կենում)։ Օ՜, փողը շատ լաւ բան է, փո՞ղ, փո՞ղ, միայն փո՞ղ... թէ չէ միւս բաները դադարկ բաներ են։ (Դուռը թակում են)։ Ո՞վ է։

ԶԻՆԻՈՐ. (Դրսից)։ Հաց չէք առնի։

ԱՆՏՕՆ. Զինուորն է։ (Դուռը բանալով)։ Ներս արի։

ՏԵՍԻԼ 2.

Անտօն եւ Զինուոր

ԶԻՆԻՈՐ. (Ներս է մտնում կոների տակը երկու սեւ հաց դրած, նրա հետ ներս են մտնում Անտօնի երկու երեխայքը 9—10 տարեկան, որոնք մատները ծծելով ազահութեամբ նայում են հացերին)—Բարև։

ԱՆՏՕՆ. (Հացը առնելով եւ ձեռով կշռելով)։ Աստուծոյ բարին. թեթև է եղբայր, շատ թեթև. ապա միւսը տեսնեմ։

ԶԻՆԻՈՐ. (Տալով միւս հացը)։ Ինչ էք ասում, պարոն, բոլոր հացերն էլ կշիռ ունեն, մեզ ախր չափով են տալիս։

ԱՆՏՕՆ. (Ձեռով կշռելով)։ Ինչ ուզում է

լինի, եթէ մէկը միւսից մի քառորդ ֆունտ էլ աւել լինի, դարձեալ բան է։

ԶԻՆԻՈՐ. Է՛, պարոն, շատ ժլատ էք. դէ մի 1/4 ֆունտը ի՞նչ է որ, դրա համար մտածում էք։

ԱՆՏՕՆ. Է՛, եղբայր, այդ 1/4 կոպէկներից է կազմւում աշխարհիս հարստութիւնը... Դէ լաւ, ի՞նչ տամ այս մէկին։ (Այդ ժամանակ երկու երեխան մօտենում են զինւորի յետեւից եւ սկսում են հացը քչփորել եւ ուտել)։

ԶԻՆԻՈՐ. Տասը կոպէկ. չէ՞ որ երէկ առաք։

ԱՆՏՕՆ. Ի՞նչ, տասը կոպէկ. եղբայր, միայն առնողը ես եմ, ուրիշ ո՞վ է առնում, որ այդպէս թանգ էք ծախում։

ԶԻՆԻՈՐ. Թանգ, չէ՞ որ տեղական հացը երեք կոպէկ է, սի՞թէ ֆունտը մի կոպէկ թանգ է։

ԱՆՏՕՆ. Դէ լաւ, երկու կոպէկ զիջում արա։

ԶԻՆԻՈՐ. (Ուզում է հացը առնել)։ Ո՛չ։

ԱՆՏՕՆ. Ի՞նչ ես խլում, մի վախիր, չեմ ուտի։

ԶԻՆԻՈՐ. Ես գործ ունեմ, պակաս չի լինի, վերջ տուր երթամ։

ԱՆՏՕՆ. Ութ և կէս կոպէկ։

ԶԻՆԻՈՐ. Զարմանալի մարդ ես, պակաս չի լինի, հասկանում ես։

ԱՆՏՕՆ. Ինը կոպէկ։

ԶԻՆԻՈՐ. Ո՛չ։

ԱՆՏՕՆ. Դէ դու գիտես։ (Հացը տալիս է)։

ԶԻՆԻՈՐ. (Հացը առնում է եւ ուզում է գնալ)։

ԱՆՏՕՆ. Դէ լաւ, թող կէս կոպէկ էլ աւել լինի, տուր ինձ։ (Ուզում է հացը առնել)։

ԶԻՆԻՈՐ. (Զտալով)։ Պակաս չի լինի, տասը կոպէկ է։

ԱՆՏՕՆ. Է՛, ինչ ժլատն ես եղել, քեզ ասում եմ տուր, այ չեմ առնի։

ԶԻՆԻՈՐ. Գլուխդ քարը թէ չես առնի, ես կտանեմ խոզ պահողին հինգ կոպէկի կտամ, քեզ տասի չեմ տայ։

ԱՆՏՕՆ. Լաւ, դու գիտես։

ԶԱՆԻՈՐ. (Ուզում է գնալ)։

ԱՆՏՕՆ. (Նորից դռնից յետ դարձնելով)։ Քեզ ասում եմ մի գնար, տուր, եղբայր, աւել աւող չկայ, առ փողերդ։

ԶԻՆԻՈՐ. Ի՞նչ զահլայ ես տանում, ասում եմ պակաս չի լինի։

ԱՆՏՕՆ. (Նորից հացերը կշռելով)։ Տես, տես, այս մէկը քիչ ծանր է։ Ուզում ես ծանրը քեզ մնայ, թեթեւը ինը կոպէկի ինձ տուր։

ԶԻՆԻՈՐ. (Հացերը խլելով)։ Է՛, ես ժամանակ չունեմ, ի՞նչ ժլատն ես, մի կէս կոպէկի համար հոգիդ դուրս է գալիս։ (Ցասկոտ դուրս է գնում)։

ԱՆՏՕՆ. (Ցնտուից)։ Եղբայր, եղբայր, արի՛, լաւ, առ տասը կոպէկդ։

ԶԻՆԻՈՐ. (Բեմի յետեւից)։ Չէ, չեմ ուզում։

ԱՆՏՕՆ. (Դուրս գնալով եւ զինւորին զօռով քաշելով եւ բերելով)։ Մարդ Աստուծոյ, ինչո՞ւ ես նեղանում, առ, առ փողերդ։ (Հացը առնում

եւ դնում է սեղանի վրայ եւ ուզում է զրպանից փողերը հանել. այդ ժամանակ երեխայք թափւում են առած հացի վրայ եւ սկսում են քչփորել եւ ուտել)։ Գեռինը մտնէք, չոռ ուտէք, ինչ աղահ տղերք էք. (Մէկի գլխին խփելով)։ Կորիր, փուչ կենդանի, քո վարող վաստակողի հէրն անիծեմ, հա... (Ցաղան խփած տեղը քորելով սկըսում է մոկտալ)։

ԶԻՆԻՈՐ. Ա՛յ մարդ, ի՞նչ եղաւ քեզ։ (Ցասկոտ, իր հացից կտրելով եւ տալով տղերանց)։ Ահա, կերէք. (Դառնալով Անտոնին)։ Կարծես մի մեծ բան է, խեղճ տղայոց ջարդում ես։

ԱՆՏՈՆ. Եղբայր, դեռ դու շատ ջահիլ ես, դեռ քո ջուրը դերիվեր է, դեռ ինն էլ պէտք է, որ տասը լինես. եթէ այժմեանից փոքրերին չզսպես, էգուց վեր կկենան քեզ էլ կուտեն։

ԶԻՆԻՈՐ. Լաւ, տո՛ւր փողերս, ես այդպիսի բաներ չեմ հասկանում, հացը եղել է ուտելու համար։ Ի՞նչ է, երեխաներին քաղցած սպանես, որպէսզի շռայլ չսովորեն. մի մտիկ տուր սրանց երեսին, կարծես հոխքից նոր են դուրս եկել։

ԱՆՏՈՆ. (Դժգոհութեամբ նրա երեսը նայելով եւ փողերը համարելով)։ Ահա մէկ կոպէկ, երկուս էլ-երեք, երկուս էլ-հինգ, երեք էլ-ութը և մի կոպէկ էլ-ինը։ (Կանգ առնելով)։ Կարծեմ էլ փող չունեմ։ (Գրպաններում որոնելով)։ Չէ, էլ չկայ, դէ լաւ, թող մի կոպէկ էլ պակաս լինի։

ԶԻՆԻՈՐ. Ո՛չ մի կոպէկ, շուտ արա՛ մի կոպէկն էլ տուր, ես շտապում եմ։

ԱՆՏՈՆ. Հէր օրհնած, կարծես քրտինք ես թափել ամեն մի կոպէկի համար. խազնի հաց, քեզ ի՞նչ։

ԶԻՆԻՈՐ. Ա՛յ դու դեռինը մտնես, Անտոն Սիմոնիչ, դեռ ես զինւոր եմ, մի կտոր հաց եմ ուտում, դու ի՞նչ ես արել (Ցոյց տալով սնդուկը), որ այստեղ քսան հազար ռուբլի ես դարսել։

ԱՆՏՈՆ. (Շփոթուած)։ Ի՞նչ, ի՞նչ, սուտ է, եղբայր, Աստուած վկայ սուտ է։ Ես ու քսան հազար ռուբլի։ Ա՜խ ո՞ւր է ճիշտ լինէր, այն ժամանակ այս սև հացը կուտէի, այսպէս կհագնէի. մի՞թէ երեխաներիս կծեծէի հացի համար։

ԶԻՆԻՈՐ. Եղբայր, դու իմ կոպէկը ինձ տուր, քոնը թող քեզ լինի։ Դէ, շուտ։

ԱՆՏՈՆ. Ուղիղ եմ ասում չունեմ, չե՞ս հաւատում։

ԶԻՆԻՈՐ. (Սեղանից հացը վերցնելով)։ Լաւ, ահա փողերդ, ես ծախու հաց չունեմ։

ԱՆՏՈՆ. (Շտապելով բաճկոնի զրպանից հանում է մի կոպէկ եւ տալով զինւորին, առնում է նրա ձեռքից հացը)։ Օ՜, ինչ ժլատ ես եղել, մի կոպէկի համար հացը ձեռիցս խլում ես։

ԶԻՆԻՈՐ. Դէ գնա, լաւ է մարդ հացը շնորհին տայ, քան քեզ պէսին ծախէ։ (Դուրս է գնում)։

ՏԵՍԻԼ 3.

Անցօն եւ երեխայք

ԱՆՏՕՆ. (Նորա յետեւից նայելով)։ Է՛, յիմարներ, ես թող ձեզանից կարողանամ մի կոպէկ շորթել, դուք ինչ ուզում էք ասացէք։ (Դառնանալով երեխաներին, որոնք զինւորի տուած հացի կտորը իրար ձեռից խլելով կրծոտում են)։ Կորէք անպիտաններ, դուրս, թէ չէ կսպանեմ, մարդու խայտառակում էք։ (Տղայքը սարսափած, հացի կտորները կրծոտելով դուրս են փախչում)։ Եւ զարմանալի է այս ոչխար ժողովուրդը բոլորը ինձ թշնամի են, ասում են ինչու երեխաներիդ լաւ չես պահում, ինչու մեծ որդուդ ուսման չես տալիս, կնոջդ ինչու ես ծեծում։ Մէկ ասա— տօ, ձեր ինչ գործն է, եթէ ես աղքատ լինէի, մի կոպէկ կբաշխէիք։ Է՛, այդ տեսակ դդղոցներ շատ եմ լսել, թող ես հարիւրանոցներս կարգ կարգ դարսեմ, իսկ իրենք անօթի զկուտան և ինձ ժլատ ասեն։ Եղբայր, մարդկութիւնը, պատիւը, նամուսը փողի մէջ է. փողը եղաւ, դրանք ինքնաբերաբար կգան, եթէ փող չունես, վայ քեզ։

ՏԵՍԻԼ 4.

Անցօն եւ Մարթա

(Ներս է մտնում Մարթան եւ վերցնելով հացը, ուզում է դուրս գնալ)։

ԱՆՏՕՆ. Ո՞ւր ես տանում։

ՄԱՐԹԱ. Տղայոցը։

ԱՆՏՕՆ. Ի՞նչպէս թէ տղայոցը։

ՄԱՐ. Ա՛յ մարդ, երեխայքը քաղցած նստում են, սա էլ շատ ես տեսնում։

ԱՆՏՕՆ. Ա՛յ ջարդուին, սատկին, գետինը մտնեն. այ նրանց վարող վաստակողին...

ՄԱՐ. Հայհոյիր, հայհոյիր. նրանք մեղաւոր չեն, մեղաւորը դու ես, որ պատճառ դառար աշխարհ բերելու և հիմա էլ տանջում ես։

ԱՆՏՕՆ. Լռիր, յիմար կին, շատ չեն խօսի, տուր հացը։ (Առնում է հացը, դնում սեղանի վրայ եւ սկսում է բարակ կտորներ կտրատել)։ Ա՛ռ, ահա սա Սաթենին, սա էլ Միսակին, այս երկու փոքր կտորն էլ միւս լակոտներիդ։

ՄԱՐ. Ա՛յ մարդ, խեղճ երեխայքը սրանով կկշտանան։

ԱՆՏՕՆ. Կկշտանան, կկշտանան, զինւորը քիչ առաջ նրանց մի մեծ կտոր հաց էլ տուեց։ Բաւական է, ագահ ուտելը լաւ չէ, վնաս է։

ՄԱՐ. Այսօր մի երկու ֆունտ միս առ, Միսակը մեղք է, խեղճը հազում է, հիւանդ է։

ԱՆՏՕՆ. Թող սատկի, մնացել է—ինչ է անում որ, ուրիշի քսան տարեկան տղայքը փող են աշխատում, իսկ նա դեռ հոր փողերն է ուտում։

ՄԱՐ. Նա մեղաւոր չէ, մեղաւորը դու ես։ Ուսման չտուիր, ասիր—ինչու փող ծախսեմ։ Արհեստի չտուիր, ասիր իմ հացով, իմ շորով ուրիշին ծառայէ։ Դու մի գործ չսկսեցիր, որովհետև փողերիցդ վախենում էիր և տղին պարապ թողնելով՝ այնքան քաղցած պահեցիր ու ծեծեցիր, որ խեղճը այդ օրին ընկաւ։

ԱՆՏՕՆ, Լաւ, շատ մի խօսիր, ես իմ բանը գիտեմ, գնա բանիդ։

ՄԱՐ. Ասում եմ, մի՞ս առ, գոնեայ խեղճ տղան մի քանի օր անդադար կերակուր ուտէ, կարելի է առողջանայ։

ԱՆՏՕՆ. Փող չունեմ։

ՄԱՐ. Աստուած տայ, որ չունենաս, կարծես մեռնելիս այդ անդուկդ էլ հետդ պէտք է տանես։

ԱՆՏՕՆ. Լռիր, յիմար կին, ասուած է ախր է, որ կանայք յիմար են։ Դու գնա քո բուրդը մանիր, այդպիսի բաներ քո խելքը չի կտրում։

ՄԱՐ. Մարդ Աստուծոյ, տղան կմեռնի, մեղք է, ջահիլ ջիւան տղի արիւնը մի մանիր։ Օրական մի քանի կոպէկ ծախսելը ինչ է քեզ համար։

ԱՆՏՕՆ. Խանում, այդ մի քանի կոպէկը հօրդ անից ես բերել, ինչ է։

ՄԱՐ. Ինձ համար չեմ ասում, քո հիւանդ որդու համար եմ ասում, մեղք է։

ԱՆՏՕՆ. Ասում եմ գնա, կորիր հա, թէ չէ եկաւ։

ՄԱՐ. Ինձ սպանիր, խնդրում եմ, վերջ տուր այս չարքաշ կեանքիս, ես չեմ կարող դիմանալ այս բոլորին։

ԱՆՏՕՆ. (Կատաղած վրայ հասնելով)։ Ասում եմ գնա, թէ չէ կջարդեմ։

ՄԱՐ. Սպանիր, ես մեռնելուց չեմ վախենում, աւելի լաւ չէ՞ մեռնել, քան այսպէս ապրել։

ԱՆՏՕՆ. (Բռունցքով դէմքին դրդելով)։ Ա՛յ դու անամօթ, լիրբ կին, հեռացիր, ասում եմ։

ՄԱՐ. (Լալով)։ Վա՜յ, կեղտոտ, անամօթ։

ԱՆՏՕՆ. (Նորից բռունցքով կոնակից հրելով)։ Կորիր, կորիր, էլ լրբութիւնից չգիտես ինչ ես անում։

ՄԱՐ. (Թքելով Անտոնի երեսին)։ Թ՛ուհ քո երեսին, անպիտան մարդ։

ԱՆՏՕՆ. (Թուքը սրբելով և գլուխը թափահարելով)։ Դէ՜, արի՜ ու մի ծեծիր։ Անիծուիս, սատանայ, թ՛ուհ... (Դուռը բանալով, ատամները կրճտացնելով, զօռով դուրս գցելով Մարթային)։ Դուրս, իժի ծնունդ, բաւական է, քո հերն էլ անիծած, քո հիւանդ որդուն էլ։ (Դուռը ծածկելով, բարկացած յետ ու առաջ գնալով)։ Ա՛յ բան, ես փողերը նրանց համար եմ աշխատել, որ բոլոր խոզի պէս ուտեն, կարծես քիչ է լա-

կոտների համար հացը, միս էլ է ուզում. մի՞ս, չէ՞, գրողս ու մահս թող ուտեն. մեռնում են թող մեռնեն, ինձ ինչ, խելք ունեն, թող ապրեն, թէ չէ Աստուած բարի ճանապարհ տայ։ Տեսա՞ր դո՛ւ, ասում է—վատ. կեղտոտ, անամօթ, թքում է երեսիս, լաւ պարկեշտ կին է, չէ՞, կարելի է էգուց էլ մի լաւ ծեծել տայ, ով գիտէ, կինը որ կատաղի, սարսափելի է. եթէ մի քիչ էլ ուշ դուրս անէի, կարելի է ճանկերով ինձ խեղդէր։ (Գլուխը թափահարելով, սի երկու պատյտ ման գալով եւ կանգնելով)։ Ժամանակ է դուրս գնալու, մի գիւղացու համար խնդիր պէտք է գրեմ, հինգ բուբլի արժէ, լաւ փող է, եթէ օրը այդպիսի երկու գործ ճանկեմ, էլ ինձանից երջանիկ մարդ չի լինի։ (Գլխարկը առնում է, սնդուկի կողպանները նայում, վրան երեք մատով խաչակնքում եւ դուրս է գնում)։

ՏԵՍԻԼ 5.

Սաթեն եւ Միսակ

ՄԻՍԱԿ. (Սաթենի հետ ներս մտնելով եւ մեղմութեամբ երկու երեք անգամ հազալով)։ Քոյրիկ, ինչ պէտք է լինի մեր դրութիւնը. ես ֆիզիքապէս հիւանդ, հայրս հոգեպէս. միւս եղբայրս դեռ փոքր, իսկ դու և մայրս էլ անճար... (Հազում է)։ Է՛հ, ինչ վատ բան է եղել աշխարհս, ինչու համար ենք ապրում, իրար հետ կռուելու,

վիճելու, անպատուելու, իրար ձեռից մի կտոր չոր հաց խլելու և կրծոտելու... Առհասարակ ես չեմ հասկանում, թէ մարդիկ որտեղից են գտել երջանկութիւն բառը, քանի որ իրապէս չկայ։

ՍԱԹԵՆ. Միսակ, մենք յոյսերս Աստուածանից չպէտք է կտրենք, նա մարդկանց ստեղծել է և տուել է ապրելու համար միջոցներ և մարդիկս էլ պէտք է համբերութեամբ տանենք մեր վիճակը։

ՄԻՍԱԿ. (Նստելով բազմոցի վրայ)։ Այո՛, տանել, միայն որքան որ մարդկային ուժը կպատէ. բայց հանգամանքները ինձ դարձրել են շատ թոյլ և եթէ մի քիչ էլ ձգուի, կկտրուի։ Չեմ հասկանում, քանի որ վերջի վերջոյ պէտք է կտրուի, արդեօք յիմարութիւն չէ համբերելը։

ՍԱԹ. Համբերութիւնը կեանք է, ասում է իմաստուն առածը, ո՞վ գիտէ էգուց մեզ համար ինչ արև կծագէ։

ՄԻՍ. Բայց... (Հազում է)։ Ախր ինչումն է մեր կեանքի արևի ծագումը։

ՍԱԹ. Կառողջանաս, կկազդուրուես և այն ժամանակ այդ սև-սև մտքերն էլ կհեռացնես քեզանից, մեր արևի ծագումը այդ կլինի։

ՄԻՍ. Բայց արդեօք հիւանդութիւնս արդիւնք է սև-սև մտքերի, թէ սև-սև մտքերի արդիւնքն է հիւանդութիւնս։ Եթէ վերջինն է, ուրեմն և իմ հոգեկան աշխարհը սև է և կմնայ սև։— Ա՜խ, Սաթեն, ծնածս օրից մի ժպիտ չեմ տեսել, ծնածս օրից միայն տեսել եմ հօրս դաժան դէմ-

2129-59
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUՈ-Арм.ССР
Ա. ԱՄ. Ա. Мясникяна

քը, կծկուած բռունցքները և մօրս լայտա աչ-
քերը... Իսկ դուք... խեղճ երեխաներ, միշտ կըծ-
կուած, սարսափած մի փշուր սև հաց ոտով-դո-
ղով կրծոտել էք և մինչև այժմս ապրել հայ-
հոյանքի տարափի և ծեծի տակ... Օ՜, արևի ծա-
գում, սև ու մութ լինէր այն արևը, որ բաշխե-
ցին ինձ... (Հազում եւ կուրծքը բռնելով զանգատում է)։

ՍԱԹ. (Լացոտ մօտ վազելով եւ բռնելով եղ-
բօրը)։ Հանգստացիր, եղբայր, դառնացած կեանքս
աւելի մի դառնացնի, խղճա մեզ և առողջու-
թիւնդ պահպանիր։

ՄԻՍ. Արդեօք ինչի՞ եմ ես պէտք, մի փա-
լաս, մի պալարոտ մսի կտոր, մի բեռ. իմ ներ-
կայութեամբ աւելի կծանրաբեռնեմ ձեր առանց
այն էլ ցաւերով լի կեանքը։

ՍԱԹ. Մի՛ ասիր, մի՛ խօսիր... (Սկսում է
լաց լինել եւ թաշկինակով աչքերը սրբել)։ Բա-
ւական է, չեմ կարող տանել այդպիսի խօսքեր։

ՄԻՍ. (Ցուցուած բռնելով քրոջ ձեռքը)։ Սի-
բելի Սաթեն, հանգստացիր, ինչու՞ ես լաց լի-
նում. դէ՛ սիրտս հանգստանում է, երբ այնտե-
ղից մաղձը դուրս եմ թափում։

ՍԱԹ. (Աչքերը սրբելով)։ Միսակ, ասա՛, ինչով կարող եմ փարատել թախիծդ, ասա՛, ես կեանքս էլ կտամ, որպէս զի դու գոնեայ մի բո-պէ երջանիկ զգաս քեզ։

ՄԻՍ. (Հիշնական ժպիտով)։ Երջանիկ զգամ... Երջանկութիւնը տրամադրութիւնից է. օրինակ, այդ երեք մեծ կողպանքով սնդուկը

հօրս երջանկութիւնն է, մի՞թէ ես երջանիկ կլի-նէի, եթէ ունենայի այդպիսի հարիւր սնդուկ-ներ, այդպէս էլ ամեն մի բան ինձ համար աշ-խարհում փուշ է։ Միայն մի բան կայ, որին ձգտում ենք բոլորս և որի մէջ բոլորս էլ հաւա-սար երջանիկ կլինենք... Դա գերեզմանն է, սառն, աղբատ, անպաճոյճ երջանկութիւն. երջանկու-թիւն հաւասար, ընդհանուր և յաւիտենական. իսկ աշխարհային երջանկութիւնները, զանազան փառքերը, պատիւները, փողը,—դրանք բոլորը ու-նայն են, ունայն ինչպէս ամեն մի շունչ, մի իր կամ մի բան... (Հազում է։)

ՍԱԹ. (Շոյելով Միսակի մազերը)։ Վերջ տանք այս խօսակցութեան. չէ՞ս գայ գնանք այ-սօր դէպի ծաղկոտ բլրակը մանգալու։

ՄԻՍ. Ո՛չ, քոյրս, թոյլ եմ զգում, յոգնում եմ, ներիր ինձ... (Հազում է)։ Դէ՛ լաւ, գնանք... (Դուռը թակում են)։ Մտիր։

ՏԵՍԻԼ 6.

Նոյնք եւ Աշոտ

ԱՇՈՏ. (Ներս մտնելով)։ Բարև ձեզ։ (Ձեռք է տալիս Միսակին եւ յետոյ Սաթենին. Սա-թենին ձեռ տալու ժամանակ փաղաքշանքով ժպտում է)։ Ի՞նչպէս ես Միսակ, առողջութիւնդ լա՞ւ է։

ՄԻՍ. Լաւ է, միայն չգիտեմ ինչու այսօր զրգռուած եմ։

ՍԱԹ. Ես յիմար էի, այնպիսի խօսակցութիւն սկսեցի, որ դու յուզուեցիր։

ԱՇՈՏ. Դուք ինչպէս էք, օրիորդ, աչքերդ ինչու են թաց։

ՍԱԹ. Ոչինչ, այնպէս։

ՄԻՍ. Յիմարութիւն է անում, ես խօսում եմ, նա լաց է լինում։ Բայց թողնենք այդ։ Աշոտ, մանգալու կգաս, Սաթենին էլ հետներս առնենք և շրջագայութեան գնանք։

ԱՇՈՏ. Ուրախութեամբ։

ՄԻՍ. (Վեր կենալով)։ Քիչ սպասեցէք, ես տաք շորերս հագնեմ, իսկոյն կգամ։ (Գնում է)։

ՏԵՍԻԼ 7.

Աշոտ եւ Սաթեն

ԱՇՈՏ. (Մինակի գնալուց յետոյ մօտենալով Սաթենին եւ ձեռը համբուրելով։) Հոգիս, դէ ասա, ինչպէս ես։

ՍԱԹ. (Տխուր)։ Է՛, Աշոտ, ինչպէս պէտք է լինեմ, ժլատ հօրս դարդը մի կողմից, խեղճ եղբօրս հիւանդութիւնը միւս կողմից ինձ բոլորովին յուսահատեցնում են։

ԱՇՈՏ. (Խանդոտ։) Սաթեն, ես կամ քեզ համար, ես քեզանով եմ երջանիկ, դու ինձանով եղիր։ (Համբուրում է)։ Օ՜, Սաթեն, մի՞թէ այն-

քան յոյս չունես ինձ վրայ, որ կարող եմ դարդիդ դարման անել. Է՛, յոյս Աստուած, շատը գնաց, քիչը մնաց, ես քո ձեռքը կխնդրեմ և ձեր ամբողջ ընտանիքի ապրուստը ուրախութեամբ ես կհոգամ, իսկ խելագար հայրդ եթէ ուզում է թող մեզ հետ հանգիստ ապրէ, եթէ ոչ թող իւր սնդուկը շալակէ և ուր ուզում է այնտեղ գնայ։

ՍԱԹ. Ա՜խ, Աշոտ, հայրս, հայրս... Մի՞թէ մի ճար չկայ, որ այդ խեղճին էլ փրկենք, այդ խեղճին էլ հասկացնենք, որ չի կարելի ապրել այդպէս դաժան, անպատիւ, խայտառակ, որ ինքն էլ մարդ է, ունի մարդկային պարտականութիւնները։

ԱՇՈՏ. (Սաթենին կրծքին սեղմելով)։ Սիրելիս, դա էլ կլինի, երբ նրանից մենք իր պաշտած փողից ոչ մի կոպէկ չուզենք և մինչև անգամ իրեն էլ մենք պահենք, այդ դէպքում նա կամաց-կամաց կմեղմանայ, նրա կնճիռները տեղի կտան ուրախ ժպտի, նրա զրգռուած և կատաղի հայեացքը կդառնայ շոյող և իր սնդուկը պաշտելով հանդերձ՝ մեզ համար էլ կլինի բարի հայր։

ՍԱԹ. (Կաթոգին համբուրելով Աշոտին)։ Օ՜, սիրելիս, ինչով ես պարտական դու մեզ, ինչու մենք պէտք է ծանրանանք քո վրայ. դու մի խեղճ ուսուցիչ, մի՞թէ կարող ես ապրեցնել մեզ բոլորիս։

ԱՇՈՏ. (Գգուելով։) Այն օրից, երբ քո սև աչքերը իմ պաշտամունքը դարձան, երբ քո մազերի թաւիշ հպակները իմ գգուանքի առարկան

եղան, այն օրից քո վիշտը իմ վիշտն է, քո ցաւը իմ ցաւը, և ինչքան որ կարող եմ պիտի աշխատեմ, որ կարողանամ փարատել թախիծդ այդ գողտրիկ երեսից... (Փարուելով եւ համբուրելով)։ Օ՜, Սաթեն, Սաթեն, որքան քաղցր է այս գուրգուրանքը, որքան անո՛ւշ... Ա՜, կեանքը թող բեռնէ որքան կամենայ, հանգամանքները թող ճնշեն, որքան կուզենան, իմ մէջքը ամուր է, կռնակը պինդ, կտանեմ, կտանեմ քո սիրուդ համար։

ՍԱԹ. (Թախծոտ ժպիտով շոյելով Աշոտի մազերը)։ Սիրելիս, բայց չէ՞ որ ամեն մի ուժ իր չափն ունի, եթէ չափից աւել բարձուի, կընկճուի... (Համբուրելով)։ Իսկ ես չեմ ուզում, որ իմ պատճառով դու վատնես քո բոլոր ուժերը... թող սիրելիս, թող սիրենք իրար, բայց իրար վրայ չծանրանանք... (Հացով գլուխը յենելով Աշոտի ուսին)։ Ինչո՞ւ պէտք է դու ինձ համար տանջուես, ինչո՞ւ կրես զրկանք, տառապանք։ Այդ բոլորը ես ուրախութեամբ կտանեմ, ես սիրոյ դէմ վարձատրութիւն չեմ ուզում։ Միակ անվաճառ մի բան կայ աշխարհումս, դա էլ վաճառուի. ո՛չ, Աշոտ, ինձ համար ծանր է քո զոհողութիւնը։

ԱՇՈՏ. (Ցուզուած զգուելով)։ Սաթեն, ապաչում եմ վերջ տուր լացիդ, գիտացիր, որ իմ զոհողութիւնը ո՛չ թէ քեզ համար է, այլ ինձ, որովհետև եթէ իմ պաշտած էակը, իմ ամենանուիրական սրտիս հատորը տանջուի, մի՞թէ տանջ-

ւողը ես չեմ լինի. եթէ քո սէգ աչերը արտասունքն է ցողում, մի՞թէ իմ սրտից արիւն չի կաթում. ո՛չ, Սաթեն, խելօք եղիր, եթէ դու քեզ կմատնես տանջանքի, ուրեմն և ինձ կտանջես՝ եթէ դու քո մէջ կխեղդես թախիծն ու վիշտը, ուրեմն և իմ հոգին կճմլես... Եւ ինչ զոհողութիւն ինձ համար, ես աշխարհումս միայնակ եմ, ոչ մի պարտականութիւն ինձ մարդկանց հետ չէ կապում, և ես այդ ազատ ոյժս ուրախութեամբ կնուիրեմ իմ սիրած էակին... (Համբուրելով)։ Սաթեն, ես այսօր իմ սէրը կը-յայտնեմ եղբօրդ և նրա հետ կխորհրդակցենք, թէ ինչպէս առաջարկենք այդ բանը հօրդ։

ՍԱԹ. Դու գիտես, որ ես ոչինչ չունեմ, ես երախտիքից և սիրուց զատ ուրիշ ոչ մի բան չեմ տածում դէպի քեզ։ Վարուիր ինչպէս կամենում ես։ (Նենա է մտնում Միսակը. Սաթենը եւ Աշոտը իրարից հեռանում են)։

ՏԵՍԻԼ Ց.

Սաթեն, Աշոտ եւ Միսակ

ՄԻՍԱԿ. Ես պատրաստ եմ, գնանք։

ԱՇՈՏ. Սիրելի Միսակ, երկու խօսք ունեմ, եթէ կարելի է յայտնեմ քեզ, յետոյ գնանք։

ՄԻՍ. Ուրախութեամբ։ (Նստում է։)

ԱՇՈՏ. Միսակ, մենք վաղուց իրար ճանաչում ենք, դեռ Ներսիսեան դպրոցումն էինք,

որտեղից հայրդ քեզ դուրս բերելով՝ ինձ անասելի վիշտ պատճառեց։ Դրանից յետոյ երբ ես աւարտեցի և վերադարձայ հայրենիք, իմ ամենամօտիկը դարձեալ դու ես եղել, մենք միշտ իրար յարգել, իրար սիրել ենք և չգիտեմ այդ յարգանքի, սիրոյ արգասիքն էր, թէ մի ուրիշ բան, իմ սրտում առկայծեց մի ուրիշ սէր, իմ հոգին հալուեց և իր մէջ ձուլեց մի ուրիշ հոգի, ես սիրահարուեցի։ Չգիտեմ արդեօք նկատում էք թէ ոչ, բայց ես միշտ անհանգիստ էի, յուզուած, տարտամ դրութեան, որոնք բուռն սիրոյ արգասիք են։ Այժմ կայանեմ, որ ես սիրում եմ Սաթենին և ցանկանում եմ ամուսնանալ նրա հետ։

ՄԻՍ. (Մի ոտքէ խորհելով)։ Սիրելի Աշոտ, դա մի այնպիսի բան է, որ ոչ ինձանից է կախուած և ոչ էլ մի մի ուրիշից, դա լոկ ձեր երկուսիդ ցանկութիւնն է, եթէ սէրը փոխադարձ է, այդ դէպքում իմ կամ մի ուրիշի միջամտութիւնը աւելորդ է։ (Սաթենին)։ Քոյրս, ցանկանում ես ամուսնանալ Աշոտի հետ։

ՍԱԹ. (Ամօթխած)։ Այո, եթէ այդ հաճելի է քեզ։

ՄԻՍ. Աշոտ, գիտցիր, որ մեր տեղական սովորութիւնների համեմատ չյուսաս ոչ մի բան. քոյրս անտ սա է, ինչոր կայ, ոչ մի բանի ակընկալութիւն չպէտք է ունենաս։

ԱՇՈՏ. Դրանք աւելորդ խօսքեր են, ես և դու եղբայր ենք, ես ոչ մի պահանջ չունեմ և

ոչ մի բան չեմ ուզում։ Գիտեմ հօրդ բնաւորութիւնը։

ՄԻՍ. (Մռայլուելով)։ Հայրս... Այո, այս ամուսնութեան ամենամեծ խոչնդոտը... Նա կարելի է դժուարանայ իր աղջիկը տալ մի աղքատ վարժապետի։ Բայց ոչինչ, կվերացնենք այդ խոչընդոտը։ (Սաթենին)։ Մօտեցիր, քոյրս, դաշն կապիր կեանքիդ յաւիտենական ընկերոջ հետ, դրոշմիր այդ դաշը փոխադարձ սիրոյ համբոյրով, եկ... (Աշոտը եւ Սաթենը համբուրում են)։ Էյ աշխարհ, քիչ առաջ ես ընկել էի ունայնութիւնների յետևից, երջանկութիւն բառը ես սուտ էի համարում, իսկ այժմ պիտի մաղթեմ, որ երջանիկ լինէք... Երջանիկ եղէք, քոյրս և եղբայրս, դառնութիւնը, լացը ձեզ համար նոյնքան հազուադիւտ լինեն, ինչոր ինձ համար է երջանկութիւնը։

ՏԵՍԻԼ 9.

Նոյնի եւ Անտօն

ԱՆՏՕՆ. (Ուրախ ուրախ ներս մտնելով, երկու կոնատակին տոպրակներով տանձ ու խնձոր, գրպանում մի շիշ օղի)։ Է՛, բարև տղայքս։ (Բոլորը զարմացած շարժում են անում)։ Այսօր ուրախութիւն է մեզ համար, մեծ ուրախութիւն։ Աղջիկս, Սաթեն, արի ձեռս համբուրիր։ Տղաս. Միսակ, դուն էլ մօտեցիր. Աշոտ, դուն էլ տղիս

եղբայրն ես, արի, խնձոր վերցրու... Ուրախութիւնը մեծ է... (Բոլորը շուարած կանգնած են)։ Զգիտէք ի՞նչ է. այ, սրանք, այս խնձորը, տանձը, այս արաղն էլ խնամին առաւ... Հէ, մի լաւ խմեցինք, սրանք էլ տուն բերի...

ՍԱՌ. Հայրիկ, ի՞նչ խնամի, ի՞նչ ուրախութիւն։

ԱՆՏ. Դէ, արի, արի, ձագս, քեզ նշանեցի և հինգ հարիւր բուբլի գլխագին առնելով՝ տուի ականացի Հաջի-Փիլոսի տղին... (Բոլորը շշմած պաղ-պաղ մտիկ են տալիս Անտոնին, ինքն էլ մի բոպէ շշմում է եւ փոխադարձ նրանց մտիկ տալիս)։

Վ Ա Ր Ա Դ Ո Ց Ը

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ Բ.

Նոյն տեսարանը, ինչ որ առաջին գործողութեան մէջ էր։

ՏԵՍԻԼ 1.

Մարթա եւ Սաթեն

ՍԱՌ. (Մարթան նստած քազմոցին գուլպայ է գործում, Սաթենը հոգած քազմոցի առաջ՝ թաշկինակով աչքերը սրբելով լաց է լինում)։ Չեմ կարող, մայրիկ, ուժերիցս վեր է, ես ինչպէս կարող եմ այդ գռեհիկի կինը լինել։

ՄԱՐԹ. Սաթեն, խելքի արի, ինչ արած, հայրդ այդպէս է կամենում։ Մէկ էլ որ ինչ պակաս տղայ է, հարուստ, առողջ, միայն ուսում չունի, ուրիշ ոչինչ։

ՍԱՌ. Ես ոչինչ չունեմ, մայրիկ, բայց ուրիշին եմ սիրում, չեմ կարող այդ երկրորդին սիրել, ինձ համար ուրիշ ամուսին, միևնոյն է թէ դժոխք։

ՄԱՐԹ. Էլի ասում ես, դէ ինչ անենք, հայրդ որ հակառակ է։

ՍԱՌ. (Վեր կենալով յուզուած)։ Հակառակ

է, թող հակառակ լինի. ես ուզում էի, որ ծնողներիս սրտով լինի, բայց քանի որ նրանք կամենում են իմ սէրը խեղդել, դրա համար սրանից յետոյ ինձ համար որդիական պարտականութիւն չկայ։

ՄԱՐԹ. Աղջի, ինչեր ես խօսում, խայտառակ կլինենք. խելօք եղիր, Սաթեն, ինչ կայ որ, քիչ են եղել սիրահարուածներ, որ յետոյ իրար չեն առել, ինչ է, նրանք չե՞ն ապրում։

ՍԱԹ. Մայր, եթէ խայտառակութեան հարց կայ, ասեմ, խայտառակ կլինենք այն ժամանակ, եթէ ինձ չտաք Աշոտին,

ՄԱՐԹ. Ինչո՞ւ։

ՍԱԹ. Որովհետև ես նրան խօսք եմ տուել, որովհետև նա ինձ համբուրել է, ես չեմ կարող թոյլ տալ, որ այդ բոլորից յետոյ մի ուրիշի հետ ամուսնանամ։

ՄԱՐԹ. Մեղասու Աստուած, աղջի բաւական է, բաւական։ Ձեռ էլ ամաչում, մօրդ մօտ այդպիսի բաներ ես խօսում։

ՍԱԹ. Մայր, աւելի մեծ խայտառակութիւն կլինի, եթէ այս բոլորը լսելուց յետոյ, նորից ինձ ամուսնացնէք Հաջի-Փիլոսի տղի հետ. այն ժամանակ թոյն կխմեմ, կսպանեմ ինձ։

ՄԱՐԹ. Հերիք է խելառ-խելառ դուրս տաս, ինչ յիմար բաներ ես խօսում։

ՍԱԹ. Հաւատացնում եմ, մայրիկ, լուրջ եմ ասում։

ՄԱՐԹ. Դէ լաւ, շատերն են ասել։

ՍԱԹ. Քչերը կատարել են, այդ քչերից մէկը էլ ես կլինեմ։

ՄԱՐԹ. (Զուզուած)։ Մարդ Աստուծոյ, հոգիս մի վրդովիր, ի՞նչ անեմ, որ ջուրն ընկնեմ, դաղեցիք է, դաղեցիք։

ՍԱԹ. (Զուզուած լացախառն)։ Մայրիկ, ես ինչ անեմ, ի՞նչու էք զօռով ինձ դժոխք գցում։ Ես չեմ կարող Հաջի-Փիլոսի հարսը լինել։ Ոսկի շատ ունի, թող իրա համար պահէ, ինձ համար Աշոտի չոր հացը աւելի քաղցր է, քան թէ նրա ոսկու կոյտերը։

ՄԱՐԹ. (Զուզուած)։ Սաթեն ջան, ի՞նչ անեմ, իմ ձեռը ինչ կայ որ. հայրդ այդպէս է ուզում, ի՞նչ արած, դուն էլ մոռացիր Աշոտին և այս նոր բախտի յետևից գնայ։

ՍԱԹ. Մայր, վերջին անգամն եմ ասում, ես Հաջի-Փիլոսի տղի ամուսինը չեմ կարող լինել, հակառակ դէպքում, ես իմ ոտովը, առանց ձեր համաձայնութեան կգնամ, Աշոտի յետևից։

ՄԱՐԹ. Ի՞նչ, ի՞նչ, Աստուծոյ սիրուն, ի՞նչ ասացիր։

ՍԱԹ. (Շեշտելով)։ Այն, որ եթէ դուք համաձայնութիւն չտաք Աշոտի հետ ամուսնանալու, այդ դէպքում ես իմ ոտքով կերթամ Աշոտի յետևից։

ՄԱՐԹ. Վա՛յ ձիւնը գլխիս, Սաթեն, բա ամօթը, բա նամուսը...

ՍԱԹ. Բոլորովին ամօթ չէ, եթէ սիրածը սիրածին է գնում, այլ ընդհակառակը պատիւ է։

ՄԱՐԹ. Սաթեն ջան, ինչեր ես խօսում, ախը դա ամօթ է, խայտառակ կլինենք։

ՍԱԹ. Ամօթ է, ամօթ չէ, այդ դուք մտածեցէք, ես վճռել եմ, հակառակ դէպքում ես իմ ոտով կգնամ, ահա իմ վերջին խօսքը։ (Դուրս է գնում)։

ՄԱՐԹ. (Միայնակ, յուզուած)։ Գետինը մըտնէք, գետինը, ինձ դաղեցիք, դաղեցիք է. ի՞նչ անեմ, մարդս որ անասունած, անօրէն, անդաստան մէկն է, նա որ մի բան ասաց՝ պէտք է կատարուի, իսկ աղջիկս էլ կանգնել է ու այդպիսի բաներ է խօսում. խայտառակ կլինենք, խայտառակ։ Չգիտեմ ի՞նչ անեմ։ (Միջոց, զուլպան է գործում)։ Մի կողմից աղջիկս ուզիղ է ասում, ո՞ւր Աշոտը, ո՞ւր Հաջի-Փիլոսի տղան Մաթոսը։ Ասում են Հաջին ոսկի շատ ունի, ի՜հ հոգեմ նրա գլուխը, ոսկին ինչին է պէտք, երբ գործադրելու եղանակը չգիտէ։ (Ցոյց տալով անդուկը)։ Ահա մենք էլ շատ ունենք, դրանով ինչ։

ՏԵՍԻԼ 2.

Մարթա եւ Անտօն

ԱՆՏՕՆ. (Նեղս մտնելով)։ Ա՜ կնիկ, քէֆ, քէֆ, Հաջի-Փիլոսը այսօր գիւղից էլ ինչ ասես բերել է. էլ դառ, էլ սեր, էլ հաւ, մի խօսքով մարդը կատարեալ մարդ է։

ՄԱՐԹ. Ի՞նչ անեմ, աղջկայ սրտով որ չէ։

ԱՆՏՕՆ. Գլուխը քարն է տուել աղջիկը, ես որ ասի, վերջացաւ։ Ա՜յ դմբօ, հինգ հարիւր ռուբլի միայն գլխագին է տալիս։

ՄԱՐԹ. Անտօն, դա էլ մեզ համար խայտառակութիւն է, այդ սովորութիւնը քաղաքում բոլորովին չկայ, գիւղերումն էլ վերջանում է, իսկ դու հարուստ մարդ աղջիկդ փողով ես ծախում։ Մէկ էլ որ մեզ ինչ, այդ փողերը էլի աղջկանդ վրայ պէտք է ծախսես։

ԱՆՏ. Տուտուց, տուտուց, ախր ասել են է, կնոջ խելքն ու հաւի խելքը մէկ է։ Տօ, թող Հաջի-Փիլոսը հինգ հարիւր ռուբլին իմ բուռը համարէ, ով ինչ ուզում է թող ասէ. այնքան են մսերս կերել՝ որ, ինչ եղաւ, հազարներս աւելի շատացան։ Իսկ ինչ վերաբերում է հինգ հարիւր ռուբլու ծախսելուն, ես գիտեմ իմ բանը, խնամուս իշացնելը հեշտ է, էլի ամենաքիչը մի երկու հարիւր ռուբլի յետ կձգեմ։ Էլ ինչ ես ուզում, համ աղջիկս մի շնորհալի, հարուստ մարդու հարս կլինի, համ էլ մի երկու հարիւր ռուբլի կշահուենք։

ՄԱՐԹ. Այդ բոլորը լաւ, բայց էլի կրկնում եմ, որ աղջիկը չի ուզում նշանուել Հաջի-Փիլոսի տղի հետ։

ԱՆՏ. Կուզէ, կուզէ, կկակղանայ կուտէ, այդպիսիները այնքան ենք տեսել որ... Թէքմաճոնց աղջիկն էլ շատ վեր-վեր ընկաւ, բայց յետոյ ինչպէս սուս ու փուս պսակուեց. աշխարհս

այդպէս է, պառաւն էլ դժոխք չէ գնում, բայց հրելով կտանեն։

ՄԱՐԹ. Անտոն, աղջիկը ուղղակի յայտնեց, որ եթէ դուք, ասում է, յօժար կամօք ինձ չէք ամուսնացնի Աշոտի հետ, այդ դէպքում ես իմ ոտով կգնամ Աշոտի մօտ։

ԱՆՏ. (Կրքոտ)։ Ի՞նչ, իր ոտով կգնայ. ես նրան ոտով գնալ խրատ կտամ։ Դէ, բաւական է, այդպիսի յիմար բաներ մի խօսի։

ՄԱՐԹ. Չէ, Անտոն, այդպէս չի կարելի, չէ՞ որ աղջկայ սրտովն էլ պէտք է լինի. և մեզ ինչ, նա Աշոտին է ուզում, թող առնէ, գլուխը քարը թէ ինչ վիճակ կունենայ։

ԱՆՏ. Ի՞նչ, Աշոտին առնէ, այդ քաղցած շանը. չէ, չէ, խանում, ես ժամանակ չունեմ, որ էդուց էլ այդ անոթու լակոտներին կերակրեմ։ Ֆու, վարժապետի կին. տուտուց, տուտուց, Աշոտը երեք հարիւր ռուբլի ռոճիկ է ստանում, իսկ Հաջի-Փիլոսի մի զոյգ եղն է այդքան աշխատում. ախր կին էք է. տօ, Հաջի-Փիլոսի ախոռից դուրս եկած աղբի եկամուտը հաւասար է այդպիսի երկու ուսուցչի ռոճկին... չգիտեմ, չգիտեմ, մի խօսքով վճռուած է, Սաթենը ինչ ուզում է թող ասի, նա պիտի Հաջի-Փիլոսենց տունը հարս գնայ։

ՏԵՍԻԼ 3.

Անտոն, Մարթա եւ Միսակ

ՄԻՍ. (Դժգոյն, հազալով ներս մտնելով)։ Հայր, այս երկու օր է լսում եմ թէ ինչ է անցնում մեր տանը... (Հազալով)։ Թէև ես էլ այս տան անդամն եմ, որդկերանցդ աւագը, բայց ցաւօք սրտի ինձ խորհուրդ չէք հարցնում... Լաւ, թողնենք այդ... Հայր, ի սէր Աստուծոյ, մի՛ք անէ այդ բանը, դրանով միևնոյն է թէ աղջկանդ կսպանէք։ Աղաչում եմ, պաղատում, մի՛ք անէ։

ԱՆՏ. (Հեգնելով)։ Ի՞նչ էք հրամայում, պարոնս, ի՞նչ, քեզ պէս անպէտքն էլ աւելացնեմ տանս։ Լաւ, լաւ, ինչու չէ, է էլ բան ունես ասելու...

ՄԻՍ. Հայր, խնդրում եմ մի՛ք հեգնէ, ես բան եմ ասում ձեզ, թողէք ձեր գծած հաշիւները։ Ես... (Հազում է) ասում եմ, որ սպանած կլինէք ձեր աղջկանը, եթէ նրան Աշոտի հետ ամուսնացնելու տեղ ամուսնացնէք մի ուրիշի հետ։

ԱՆՏ. (Կրքոտ)։ Է՛, յիմար, այդ քո գործը չէ, դու դեռ գնա հաց կրծիր, ես գիտեմ թէ ինչ եմ անում։

ՄԻՍ. (Ցուզուած)։ Հայր, խնդրում եմ, մի՛ անարգիր։

ԱՆՏ. Լռի՛ր, դադարկապորտ, հօրդ վրայ բեռ ես եղել բաւական չէ, եկել ես այժմս էլ հրա-

ժաններ ես արձակում։ Ի՞նչպէս չէ, Աշոտին տամ։ Տօ, մէկ գնա դու քո գլխի ճարը տես, յետոյ արի ուրիշի համար մտածիր, ախմախ...

ՄԻՍ. Ամօթ քեզ, չես ամաչում, խղճի կտոր չկայ քո մէջ... (Զարհնոցաց)։ Հայր, հայր, մտածիր թէ ինչ ես անում, ի՞նչու ես անարգում ինձ, մի՞թէ ես էլ մարդ չեմ, իմ մէջ չկայ պատուի զգացում... Էլ ինձ ի՞նչու բերիր աշխարհ, միայն տանջելու, անուանարկելու, անպատուելու... Օ՜, հայր, հայր...

ԱՆՏ։ Լռիր, խնլոտ, դեռ քիթդ սրբիր, յետոյ այդպիսի բաների մասին խօսիր... Տօ չես էլ ամաչում, մի օր մի կոպէկ վաստակի՞լ ես, մի օր մի երկու ֆունտ հաց բերի՞լ ես, մի օր ասել ես, թէ հայրս մեղք է, ես էլ փող վաստակեմ. ոչ, ինչ կարիք կայ, դէ հայրս պահում է, նստեմ և ուտեմ։

ՄԱՐԹ. (Ցուզուած)։ Ա՜յ մարդ, բաւական է, ինչ ես խեղճ տղի յետևից ընկել, մեղաւորը դու ես, որ նա անգործ է, դու այնքան անխիղճ ես, որ չես խնայում հիւանդ տղին և էլ ինչ ասես, որ չես թափում նրա գլխին։

ՄԻՍ. Մայրիկ, մի՛ խօսիր, թող, թող նա լուտանքները թափէ գլխիս, շատ շատ մի ամիս, երկու ամիս կեանք ունեմ... իմ հաշիւը վերջացել է... Անարգի՛ր, հայր, ասա՛, լսում եմ...

ԱՆՏ. Դէ լաւ, դուրս, ինձ անհանգիստ մի՛ք անէ, իմ վճիռը վճիռ է, մի քիչ յետոյ Հաջի-

Փիլոսը կգայ և ամէն բան կվերջանայ։ Ասում եմ, որ ես Աշոտին աղջիկ տուողը չեմ։

ՏԵՍԻԼ 4.

Նոյնի եւ Աշոտ

ԱՇՈՏ. (Ներս մտնելով. Միասակը նստում է բազմոցին, միւսները կանգնած են)։ Բարև ձեզ։

ԱՆՏ. (Աշոտին ոտից մինչև գլուխը չափելով)։ Ի՞նչ էք կամենում, պարոն։

ԱՇՈՏ. Ես եկել եմ ձեզանից խնդրելու ձեր դուստր Սաթենի ձեռը։

ԱՆՏ. Պարոն, ես էլ յայտնում եմ, որ ես ձեզ համար աղջիկ չունեմ, իմ աղջիկը նշանուած է և խնդրում եմ, որ շնորհքներդ պակսեցնէք։

ԱՇՈՏ. Պ. Անտոն, ես ձեզանից խնդրում եմ, որ քաղաքավարի լինէք, ես ձեզ ասում եմ, որ իբրև աղջկայ հայր ձեր համաձայնութիւնը տաք, եթէ ոչ ուրիշ կերպ կվարուեմ։

ԱՆՏ. (Զսպուած)։ Պարոն, դարձեալ կրկնում եմ, որ ես իմ աղջիկը ձեզ արժան չեմ համարում և խնդրում եմ, որ վերջացնէք այս խօսակցութիւնը։

ՄԱՐԹ. (Աղաչական)։ Անտոն, Անտոն, տուր համաձայնութիւնը, ինչո՞ւ ես հակառակ։

ՄԻՍ. Հայր, աղաչում եմ։

ԱՇՈՏ. (Մօտենալով)։ Հայր, թոյլ տուր ձեռդ համբուրելու։

ԱՆՏ. Ոչ, աւելորդ է աղաչանքը, խնդրում եմ, պարոն, չափաւորեք ձեր եռանդը և հեռանաք։

ԱՇՈՏ. Պ. Անտոն, ես ձեր հայրական իրաւունքը ճանաչելով՝ եկել և խնդրում եմ, հակառակ դէպքում ուրիշ կերպ կվարուեմ։

ԱՆՏ. Ի՞նչ, ուրիշ կերպ կվարուե՞ս, ես ձեզ ասում եմ հեռացէք այստեղից։

ՄԱՐԹ. Անտոն, Անտոն։

ՄԻՍ. (Վեր կենալով)։ Հայր, տուր հաւաձայնութիւնդ, արդէն ամեն բան վերջացել է, աղջիկ տղայ իրար սիրում են և իրար խօսք են տուել, օրհնիր։

ԱՆՏ. (Ծաւաձոնալով երեսը)։ Տօ, դուն էլ, դուն էլ. է, դուն էլ սիրահարուած ես, դուն էլ խօսք տուել ես։

ՄԻՍ. (Զայրոյթով)։ Անխիղճ մարդ, դարձեալ անարգում ես ինձ, ես այլևս չեմ կարող մնալ այս կրակի տակ։ (Դուրս է գնում)։

ՄԱՐԹ. Անտոն, ուղիղ որ դու անխիղճ ես, ինչ ես ուզում հիւանդ տղայից, մի կտոր չոր հաց ես ուտեցնում, դա էլ քթիցն ես հանում։

ԱՆՏ. Քթից չէ, պնչից էլ կհանեմ. մի օր մի կոպէկ բերե՞լ է, մի օր ասել է թէ ես էլ մարդ եմ, պարտաւոր եմ փող աշխատել։

ՄԱՐԹ. Օ՜, անտանելի ես մարդ, փող, փող. փողի համար սպանում ես որդուդ, փողի համար ծախում աղջիկդ, փողի համար ցեխոտում պատիւդ, չեմ հասկանում։

ԱՆՏ. Է՛հ, զահլայ տարաք. (Բերանը ծռելով)։ Պատիւդ ցեխոտում ես, աղջիկդ ծախում, ինչ կհրամայէք, այս անօթուն տամ աղջիկս, ինչ է սիրահարուած է։

ԱՇՈՏ. Պարոն, խնդրում եմ քաղաքավարի լինէք և ձեր խօսքերին չափ դնէք։

ԱՆՏ. Ի՞նչ էք ուզում, պարոն, խնդրում եմ որ հանգիստ թողնէք ինձ և հեռանաք այստեղից։

ԱՇՈՏ. Կհեռանամ, կհեռանամ, կարօտ չեմ քո դէմքին, ես ցանկանում էի, որ քո կամքով լինի, եթէ չի լինում, մեղաւորը դու ես։

ՄԱՐԹ. Անտոն, տուր հաւաձայնութիւնդ, խնդրում եմ։

ԱՆՏ. Չէ, չէ, անկարելի է։ Դէ գնացէք, եղբայր, էլ ինչ էք կանգնել։

ԱՇՈՏ. Կգնամ, միայն ափսոս, որ ձեր հայրական պարտականութիւնները ի չարն էք գործ դնում։

ԱՆՏ. Այո՛, այո՛, դուք երբ որ աղջիկ կունենաք, ի չար մեր գործ դնէ։

ՄԱՐԹ. Անտոն, Անտոն, աղաչում եմ։

ԱՆՏ. Սուս, յիմար կին, ես իմ գործը գիտեմ։

ԱՇՈՏ. Ուրեմն, ցտեսութիւն, մեղքը ձեր վիզը։

ԱՆՏ. (Հեգնական)։ Ցտեսութիւն, ցտեսութիւն։

ՏԵՍԻԼ 5.

Նոյնք եւ Սաթեն

ՍԱԹԵՆ. (Ներս մտնելով եւ բռնելով Աշոտի ձեռքից)։ Ո՞ւր, կաց... (Աշոտը կանգնում է)։ Հայր, ես մինչև այսօր լուռ ու մունջ տանում էի քո բոլոր անտեղի պահանջները, համբերում էի քո ամեն տեսակ վարմունքներին, բայց այլևս չեմ կարող համբերել և ահա յայտնում եմ, որ ես Աշոտի նշանածն եմ։ Տուր քո հայրական օրհնութիւնը։

ԱՆՏՕՆ. (Ապուշ կտրուած)։ Միայն ես անէծք կտամ ձեզ, ինչպէս էք համարձակւում։

ՍԱԹ. Հայր, օրհնիր։

ԱՆՏ. Անիծուիք դուք, օրհնեմ՝ վայ խռով ճնա ձեր գլխին այն տէրտէրի աջն ու խաչը, որը ձեզ պէտք է պսակէ։

ՍԱԹ. Վերջին անգամն եմ ասում, հայր, օրհնիր։

ԱՆՏ. Ո՛չ, ոչ, անիծում եմ...

ՍԱԹ. (Լացով)։ Ուրեմն ճնաս բարեաւ իմ հայրական օջախ, ճնաս բարեաւ իմ սիրելի մայրիկ։ Օ՜, դառն է, դառն... գնանք։ (Աշոտը եւ Սաթենը գնում են)։

ՄԱՐ. (Ցուցուած)։ Սաթեն, Սաթեն, կաց, լսիր ինձ. (Ցնտոյ դառնալով Անտոնին)։ Ի՞նչ արիր, ինչո՞ւ չօրհնեցիր, ինչո՞ւ մարդավայել չվարուեցար աղջկանդ հետ։

ԱՆՏ. Ա՛յ, դուն էլ, քո աղջիկն էլ, այդ բոլորը քո մեղքն է, դուն ես մեղաւորը, դու. անիծուիք բոլորդ էլ, գեռինը մանիք, էլ ոչ յարգ կայ, ոչ պատիւ։ Դէ՛, դուրս, դուրս, թող ինձ հանգիստ։ Օ՜, անէծք, անէծք ձեզ բոլորիդ, որքան լրբութիւն, որքան անզգամութիւն, թիւհ...

ՄԱՐԹ. Մեղաւորը դու ես, դու. խեղճ տղերանցը հայր չես, այլ դահիճ... (Լացով)։ Օրս խաւրեցրիր, ինձ մաշեցիր, տանջեցիր, ա՛յ անասուած, անդաստան մարդ։ (Գնում է)։

ՏԵՍԻԼ 6.

Անտօն միայնակ

ԱՆՏ. Ա՛յ խայտառակութիւն, ես հիմա ինչ պատասխանեմ Հաջի-Փիլոսին, ինչ ասեմ. մարդը առօք փառօք, բարեկամներով եկել է քաղաք, որ հարսին տես գայ, հարսը փախել է։ Տեսա՞ր հարսը, տեսար համեստ, պարկեշտ աղջիկը... Ցեխոտեց, խայտառակեց ինձ... Վա՛յ իմ անունը, իմ պատիւը, հիմա ամբողջ քաղաքը պէտք է խօսէ, թէ Անտոն Սիմոնիչի աղջիկը փախել է... Վա՛յ. վա՛յ, վա՛յ... Լա՛ւ, լա՛ւ, կտեսնենք իրար, Աշոտ, սպասիր, ես քեզ ցոյց կտամ իմ տունը գալ և զօռով աղջիկս փախցնել... Դեռ ամեն բան ոչինչ, բայց արի տես, որ հինգ հարիւր ռուբլին էլ մարդը համբեց և ես էլ սնդուկս դարսեցի, իսկ այժմ պէտք է յետ տալ... Օ՜, Աշո՛տ, Աշո՛տ...

(Քիչ յուզուած մանգալով եւ սնդուկի առաջը կանգնելով)։ Հա, ուղիղ, սնդուկս բանամ տեսնեմ, ով գիտէ, կարելի է այստեղից էլ բան մեն փախցրած լինեն, թէև կողպանքները ամուր են, բանկային տոմսերը իմ անունով, բայց ով գիտէ կարելի է հինգ հարիւր բուբլին տարած լինեն... (Վախեցած, շտապ-շտապ, կողպանքները ընտրելով բաց է անում սնդուկը՝ երեսը խաչակնքելով)։ Ո՛չ, ոչ տեղն են... (Դող-դող հարիւրանոցները համարելով)։ Մէկ, երկու, երեք, չորս, հինգ... Է՛, փառք Աստուծոյ։ (Բանկային տոմսերը հանելով եւ փարուելով)։ Օ՜, ձեր հոգուն մեռնեմ, իմ սիրունիկներս, իմ կինս, տղաս, աղջիկս, իմ մխիթարանքս... (Ցանկարծ դուռը բանալով ներս է մտնում Հաջի-Փիլոսը. Անտոնը վախեցած բանկային տոմսերը տեղն է դնում եւ սնդուկը շտապ-շտապ փակում)։

ՏԵՍԻԼ 7.

Անտոն եւ Հաջի-Փիլոս

ՀԱՋԻ-ՓԻԼՈՍ. (Տէր ողորմեան քաշելով)։ Բարև, խնամի, ինչ ես անում, փողերդ ես համարում,

ԱՆՏ. (Վեր կենալով եւ խոնարհութեամբ բարեւելով)։ Աստծու բարին, ինչպէս էք, լաւ էք. Է, Հաջի-աղա, իմ փողերը որտեղից, հին մին

բարաթներ կան, նայում էի։ Խնդրում եմ նստեցէք։

ՀԱՋԻ-ՓԻԼ. (Նստելով)։ Լաւ, լաւ, Անտոն խնամի, փող ինչու չունէք, ունէք, ունէք, Աստուած մէկին հազար տայ, փառք Աստուծոյ, ինչու էք ուրանում Աստուծոյ տուածը։

ԱՆՏ. Է՛, Հաջի-աղա, մի երկու հազարը փող չէ, այ միլիոն, այն ժամանակ ուղիղ որ փող կլինէր, է, ուր է, ուր։

ՀԱՋԻ-ՓԻԼ. Է՛, խնամի, Աստուծուն փառք, եղածն էլ բաւական է. կանչիր խանում քրոջս, խօսքը վերջացնենք, հարսնտեսի ժամանակը որոշենք, որպէս զի երեկոյեան բարեկամներով գանք։

ԱՆՏ. Այդ բոլորը լաւ, բայց... (Ծոծրակն է քորում)։

ՀԱՋԻ-ՓԻԼ. Ինչ բայց, դէ թող ամեն բան այսօր վերջանայ։ Երևի պատրաստութիւն չունես. եղբայր, հարսնտեսի համար ոչ մի պատրաստութիւն հարկաւոր չէ։

ԱՆՏ. Այդ բոլորը լաւ, բայց... (Ծոծրակն է քորում)։

ՀԱՋԻ-ՓԻԼ. Ձեռ հասկանում ինչ բայց, անցեալ օրը վերջացրինք պրծանք, մեր մէջ կարծեմ ոչ մի տարաձայնութիւն չկայ։

ԱՆՏ. Ուղիղ է այդ բոլորը, բայց...

ՀԱՋԻ-ՓԻԼ. Էլ ինչ բայց, խօսիր էլի։

ԱՆՏ. Հաջի-աղա, օջախս մարաւ, խայտառակ եղայ, գեռինը մտայ, նամուս կորցրի, էլ

ինձանից դժբախտ մարդ չկայ, աղջիկս փախաւ...

ՀԱՋԻ-ՓԻԼ. (Փափախը յետ գցելով)։ Ի՞նչ, աղջիկդ փախաւ...

ԱՆՏ. (Ցաւագին գլուխը շարժելով)։ Այո՛, այո՛, խեղճ եմ ես, Հաջի-աղա, բնաւորութեամբ, պատւով խեղճ...

ՀԱՋԻ-ՓԻԼ. (Կրկնում)։ Դու նամուս չունի՞ս... Տօ, աղջիկդ փախաւ... Տօ, դու գլխիդ գլխարկ չունի՞ս. ջարդէիր, սպանէիր, ծեծէիր, խեղդէիր... Տօ, մարդ այնքան անշնորհք լինի, որ աղջիկը այդքան լրբանայ... Ո՞ւմ հետ փախաւ, ռւմ...

ԱՆՏ. Ես ինչ գիտեմ, գրող ու մահի հետ, իր պէս մի լդտօրի հետ։

ՀԱՋԻ-ՓԻԼ. Ո՞ւմ հետ, ռւմ...

ԱՆՏ. Աշոտ վարժապետի հետ։

ՀԱՋԻ-ՓԻԼ. (Բռնազբօսիկ ծիծաղով)։ Հա՛, հա՛, հա՛... Աշոտի հետ, տեսար բանը, տօ, այն անօթու հետ. (Հեգնելով)։ Վարժապետ է, ինչ ասել է, կրթուած, զարգացած... Վա՛յ, վա՛յ, տունդ քանդուի, Անտոն Սիմօնիչ. բա նամուսդ, բա պատիւդ, թիւհ... (Ցէրողորմեան կրքոտ քաշելով)։ Լաւ, լաւ, բայց, գիտցէր, Անտոն Սիմօնիչ, դու պատիւ չունես, ես ունեմ, ես նրա հէրը կանիծեմ, թող սպասէ, իմ հարսը փախցնեն, հա՛... (Բեխերից բռնելով)։ Դէ՛, եթէ ես նրա հախից չեկայ, սրանք թող հարամ լինեն։ Իմ հարսը փախցնե՞ն։

ԱՆՏ. Ուղիղ, շատ ուղիղ ես ասում, բայց ես ինչ անեմ։

ՀԱՋԻ-ՓԻԼ. Ի՞նչ, այն կանես, որ քանի պսակուած չեն, իրար հետ աշխատենք աղջիկդ յետ բերենք և Աշոտին մի կերպ մէջ տեղից վերացնենք։

ԱՆՏ. Լաւ, ես ինչ կարող եմ անել որ։

ՀԱՋԻ-ՓԻԼ. Փող ծախսենք, սուտ վկաներ գտնենք, գրենք, մրենք, կորցնենք։

ԱՆՏ. Փո՛ղ, Հաջի-աղա, մի երկու կոպէկ ունեմ, հազիւ գլուխս եմ պահում, իմ փողը որտեղից է։

ՀԱՋԻ-ՓԻԼ. Ի՜ դու աննամուս. հեշտ է, փողը ես կծախսեմ, միայն ինչոր կասեմ, դու այն գրիր, հասկացա՞ր։

ԱՆՏ. Լաւ, ինչու չէ. բայց ինչով մեղադրենք նրան։

ՀԱՋԻ-ՓԻԼ. Ինչո՞վ... Մի բան կանենք... (Մտածելով)։ Հա՛. գտայ. միայն քեզ կասեմ, մարդու բան չասես, իմացա՞ր։

ԱՆՏ. Ցիմար խօ չեմ, ինչու պէտք է ասեմ։

ՀԱՋԻ-ՓԻԼ. (Խստիրդատը)։ Մեր տանը կեղծ փող կարելու մի մեքենայ կայ իր պարագաներով. գիտես, մտքիդ բան չանցկացնես, իմ մի բարեկամինն էր, մեզ մօտ թողեց, մնաց ու մնաց. հա՛, մէկին կգտնենք և մեքենան, մի քանի հարիւր ռուբլի կեղծ փող էլ հետը, մի կերպ կտանէ ու նրանց տան մէջ կպահէ, հասկացա՞ր. մի ուրիշի ձեռքն էլ մի կեղծ հնգանոց կտանք և կասենք այնպէս անէ, որ բռնուէ և երբ նրան հարցնեն թէ որտեղից, ասէ, որ Աշոտ

վարժապետից եմ առել, այն ժամանակ ոստիկանութիւնը խուզարկութիւն կանէ և ամեն բան կվերջանայ, հասկացար։

ԱՆՏ. Գեղեցիկ, գեղեցիկ։

ՀԱՋԻ-ՓԻԼ. Գիտե՞ս դուն էլ ինչ պէտք է գրես։

ԱՆՏ. Ո՛չ, ինչ պէտք է գրել։

ՀԱՋԻ-ՓԻԼ. Դուն էլ ոստիկանութեան մի անանուն նամակ գրիր, թէ Աշոտ վարժապետը պարապում է դրամանենգութեամբ։

ԱՆՏ. Է, դրանով ի՞նչ։

ՀԱՋԻ-ՓԻԼ. Այն, որ նախ քան կեղծ դրամ բռնելը, կասկած կունենան Աշոտի վրայ և խիստ խուզարկութիւն կանեն։

ԱՆՏ. Գեղեցիկ, գեղեցիկ... Այս բոպէիս։ (Նստում է սեղանի մօտ եւ սկսում է գրել անանուն նամակ, յետոյ կարդում է)։ «Ձերդ յարգութիւն պ. գաւառապետ, սրանով յայտնում եմ, որ Աշոտ վարժապետ Ազատեանը պարապում է դրամանենգութեամբ։ Այս յայտնելով, իմ հաւատարիմ հպատակութեան պարտքն եմ կատարում։ Մնամ ձեր խոնարհ ծառայ Անյայտ»։

ՀԱՋԻ-ՓԻԼ. Շատ լաւ, շատ լաւ, փակիր և տուր ինձ, ես կուղարկեմ։

ԱՆՏ. (Փակելով եւ յանձնելով)։ Համեցէք։

ՀԱՋԻ-ՓԻԼ. Իսկ ինչ վերաբերում է սուտ վկային, այդ ես կգտնեմ, բայց դու մէկը գտիր, որ Աշոտենց տան ամեն մի ծակ ու ծուկը գիտենայ, որպէս զի մեքենան ու կեղծ փողերը տանի և նրանց տան մէջ տեղաւորէ։

ԱՆՏ. Այդ հեշտ է, մէկը կգտնեմ։

ՀԱՋԻ-ՓԻԼ. Այսօր այդ երկու մարդը պատրաստ լինեն, որպէս զի ասեն բան վերջանայ։ Վկան ես կգտնեմ, միւսը քո պարտքն է։

ԱՆՏ. Լաւ, շատ լաւ։

ՀԱՋԻ-ՓԻԼ. Ուրեմն մնաս բարեաւ. (Վկեր է կենում)։ Հա՛, ուղիղ, գլխագին փողերը յետ տուր։

ԱՆՏ. (Շփոթած)։ Փողերը։

ՀԱՋԻ-ՓԻԼ. Հա՛, ի՞նչ, բա փողերը հօ թողնելու չեմ։

ԱՆՏ. Կարելի է նորից եղաւ։

ՀԱՋԻ-ՓԻԼ. Երբ որ նորից եղաւ, այն ժամանակ ես էլ նորից կտամ։

ԱՆՏ. Լաւ, թող մնայ, երբ չեղաւ այն ժամանակ կտամ։

ՀԱՋԻ-ՓԻԼ. Ո՛չ, ո՛չ, իմ փողերը տուր։

ԱՆՏ. (Գլուխը թափահարելով, բանալինները հանելով եւ քաց անելով սնդուկը)։ Վա՛յ Սաթեն, վա՛յ Սաթեն, գեսլինը մտնես դու... (Նորից գլուխը թափահարում է եւ ծուլութեամբ, դողդողալով հանում է հարիւրանցները եւ մէկ մէկ տալով Հաջի-Փիլոսին։) Մէկ... (Գլուխը թափահարում է)։ Հ՛ը... երկու... հ՛ը... երեք... հ՛ը... չորս... հ՛ը... հինգ... այդ է, հինգ հարիւր ռուբլի եղբայր, չէ՞... հ՛ը... Գեսլինը մտնես աղչի, գեսլինը... (Գլուխը թափահարում է)։

ՀԱՋԻ-ՓԻԼ. Ուղիղ, հինգ հարիւր ռուբլի, ուրեմն մնաս բարեաւ, երեկոյեան Ճօճոյենց խանը բեր այն մարդուն։ (Դուրս է գնում)։

ԱՆՏ. *(Դեռ չոքած սնդուկի առաջ, տխուր կողպելով սնդուկը եւ գլուխը թափահարելով։)* Հ՛ը... ափսոս հինգ հարիւր ռուբլի։

Վ. Ա. Ր Ա. Գ. Ո Ց Ը

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ Գ.

Տեսարանը ներկայացնում է մի փոքր գողտրիկ սենեակ, զարդարուած պատկերներով, մի կողմը գրասեղան իր զարդ ու զարդարանքով, միւս կողմը գրքեր իր դարակով. մի դուռ, դէմ ու դէմ երկու պատուհան. սեղանի վրայ մի լամպար իր գեղեցիկ լուսամփոփով, աթոռներ, այս ու այն կողմը բաց գրքեր, թափթափուած թղթեր։

ՏԵՍԻԼ 1.

Աշոտ ու Սաթեն

ԱՇՈՏ. *(Թառը ձեռին նուագում է մի սրտառուչ եղանակ, Սաթենը մօտը նստած, զմայլուած լսում է)։* Դէ՛, ասա, Սաթեն։

ՍԱԹԵՆ. *(Սկսում է նոյն եղանակով երգել)։*

«Սար ու ձոր ընկած,
Մէկ չոր թփի տակ,
Գեռնին նայելով,
Մնացել եմ նստած»։

ԱՇՈՏ. Շարունակիր, հոգիս։ *(Ինքը ոգեւորուած, ուժգնութեամբ խփում է թառի թելերին)։*

ՍԱԹԵՆ. *(Շարունակում է)։*

«Ամպերն առաջիս,
Սարերն յետևիս,
Քեզ մտիկ տալով,
Ա՛յ իմ քաղցր Մասիս»։

ԱՇՈՏ. Օ՜, սիրունիկ երգ, ծ, սրտառուչ հայրենի մեղեդի, նրա ամեն մի խօսքը, նրա ամեն մի շեշտը զգայուն սրտի համար խոց է, զգայուն սրտի համար խոր վերք։ Շարունակիր, սի՛ելիս։ (*Զգացուած շարունակում է նուագել*)։

ՍԱԹ. (*Շարունակելով*)։

«Նազլու, իմ Նազլու,
Անուշիկ Նազլու,
Աղասին քեզ տայ,
Իր վերջին բարև»։

ԱՇՈՏ. (*Թառը մի կողմ դնելով եւ զգացուած Սաթենին կրծքին սեղմելով ու համբուրելով*)։ Ո՛չ, ո՛չ, Սաթեն, վերջին բարևս չեմ տայ, այլ կտամ քեզ իմ սիրասենչ համբոյրս։ Օ՜, սիրտ իմ, արդեօք զգացե՞լ ես, սրանից աւելի բերկրանք, որքան քաղցր է, որքան անուշ, սիրելի Սաթեն։

ՍԱԹ. (*Տխուր յենուելով Աշոտի ուսին*)։ Այո՛ քաղցր է, բերկրալի, անուշ, բայց և այնպէս իմ սիրտը տխուր է, Աշո՛տ. մի՞թէ մարդ իրանով պէտք է երջանիկ լինի, երբ մարդուս շուրջը փուշ և տատասկ է, երբ խմած ջրի մէջ խառն է արտասուք, երբ շուրջդ անհոգ քրքջի տեղ միայն սրտառուչ մղկտոցն է, մի՞թէ երջանկութիւնը կատարեալ է։

ԱՇՈՏ. (*Քաղցրութեամբ*)։ Մոռացիր, Սաթեն, ինչ արած, աշխարհիս կարգ ու կանոնը այդ է։

ՍԱԹ. Տարօրինակ կարգ ու կանոն. մի՞թէ եղբօրս տանջանքն ու հիւանդութիւնը, հօրս գձուձութիւնը, մօրս լացն ու արտասուքը, փոքրը եղբայրներիս քաղցն ու ծւոցը կարգ ու կանոն է. բայց ինչո՞ւ է մեզ համար այդ այդպէս, իսկ ուրիշների համար այլպէս։ Ի՞նչու համար մի ուրիշի հայրը բարի է, առատ, գթոտ, ուրախ, իսկ մերը Աստուած գիտէ թէ ինչպէս։

ԱՇՈՏ. Սաթեն,—մարդս ինչոր չէ, այն լաւ է,—ասում է առածը։ Ո՞վ գիտէ, սիրելիս, թէ ուրիշները ինչով են դժբախտ։ Դժբախտութիւնը ո՛չ չափ ունի, ո՛չ կշիռ և ո՛չ էլ յայտնի պատճառ։ Այսօր դուք դժբախտ էք, որովհետև հայրդ գձուձ է, եղբայրդ հիւանդ, մայրդ մռայլ և տխուր. իսկ մի ուրիշը նոյնքան դժբախտ է, որովհետև չունի նոր տարազի շոր, որովհետև իր նշանածը լաւ չէ պարում, որովհետև մի ուրիշը աւելի հարուստ է, որովհետև երրորդի հետ աւելի սիրալիր են քան իրան. —Է՛, սիրելիս, յիմար բան է աշխարհս, յիմա՛ր, չի կարելի գիտենալ, թէ երջանկութիւնը ո՞րտեղ է վերջանում, դժբախտութիւնը որտեղ սկսւում. անծայր, անվերջ հակադիր են մարդկային իղձերը, որոնք իրար հետ գալարուած ընթանում են կեանքի հետ և եթէ ուզում ես, հէնց այդ գալարուած իղձերն է և կեանքը։

ՍԱԹ. Բայց և այնպէս դրանց մէջ զանազա-

նութիւն շատ կայ։ Ո՞ւր է, թող մերոնք կեանքից մանր տրտունջներ ունենային, ես բոլորովին չէի զբաղուի նրանցով։

ԱՇՈՏ. Թող, սիրելիս. թող մենք հագենանք երջանկութեան գալարումների մէջ։ (Համբուրում է)։ Կեանքը վարդի թուփ է, որի վերևը վարդն է, իսկ չորս կողմը փուշ։

ՍԱԹ. Այո, փուշ, ես այդ թփից երբ ուզել եմ վարդ քաղել, միշտ իմ ձեռները փշերն են ծակոտել։ (Ձեռներով ընկնելով Աշոտի ուսին)։ Օ՜, սիրելիս, դժբախտ եմ։

ԱՇՈՏ. (Կրծքին սեղմելով)։ Է՛, սիրելիս, ես այս բոպէիս երջանիկ եմ, երջանիկ, որովհետև իմ կրծքին եմ սեղմում ինձ հատար ամենաթանգագին էակին։ Ես միայնակ էի աշխարհումս, իսկ այժմ յաւիտեան ինձ հետ կլինի իմ սրտի հատորը։ Կեանքի մէջ կան բոպէներ, երբ մարդս կատարեալ երջանիկ է, և այդ միայն այն ժամանակ, երբ սիրոյ մէջ է ընկղմած, երբ սիրելու շունչն է իրան շոյում, երբ սիրելու թևերը մարդուս վզովն են փաթուում։ Օ՜, Սաթեն, յետ չնայենք դէպի կեանքը, մի բոպէ մոռանանք այն. փաթուենք, սիրելիս, համբուրենք, գուրգուրենք, սէր, միայն սէր շնչէ, միայն սէր շընչայ... (Կաթոգին համբուրում է)։

ՍԱԹ. (Մի թևով վզովը փաթուելով, գլուխը յենելով Աշոտի գլխին, իսկ մի ձեռքով Աշոտի մազերը շոյելով)։ Քաղցր ես, պաշտելի ես, Աշոտ. այո, հազիւ հազ, ձեռքերս փշերով չանկռտելով,

կեանքի թփից պոկեցի քեզ. հոտոտեմ քեզ, իմ ազնիւ, իմ սիրուն, իմ հոտոտ վարդ։ Կրծքիս մէջ կպահեմ քեզ, սրտիս ծալքերով քեզ կպարուրեմ, հոգուս շնչով քեզ կտաքացնեմ։ Ի՞նչ է աշխարհը առանց սիրոյ, դատարկ, ամայի, ցուրտ, մռայլ մի բան իսկ սէրն է այն արևը, որը կեանք է տալիս մարդկութեան։ (Համբուրում է)։

ԱՇՈՏ. (Զուարթ)։ Սաթեն, ես աւելին կասեմ, սէրն է ամեն ինչ, եթէ չլինէր սէր որդու և հօր մէջ, սերունդ չէր շարունակուի, եթէ չլինէր սէր մարդկանց մէջ, եղբայր, քոյր գոյութիւն չէին ունենայ, եթէ չլինէր սէր դէպի մերձաւորը, քաղաքակրթութիւն չէր լինի. (Սեղմելով կրծքին)։ Վերջապէս, եթէ չլինէր սէր իմ և քո մէջ, այս երջանիկ բոպէները չէինք ունենայ։ Սիրենք իրար, Սաթեն։ Սէր, գիտես որքան խորն է, որքան անուշ, որքան հզօր և պինդ. սէրն է մարդկութեան առանցքը, որի շուրջն է պտտուում կեանքը։ (Լսում են խառնուփնթոր ձայներ, թողնելով Սաթենին)։ Այս ի՞նչ է, (Մօտենում է պատուհանին եւ դուրս նայում)։ Զինուորներ, ոստիկան մեր դրան առաջ, տէր իմ Աստուած, այս ի՞նչ բան է։

ՍԱԹ. (Սփրտնած նայելով պատուհանից)։ Ուղիղ, այդ ի՞նչ բան է, Աշոտ։

ԱՇՈՏ. (Շուարուած)։ Չգիտեմ։

ՏԵՍԻԼ 2.

Նոյնք, դատախազ, մի ոստիկանական սպայ եւ ոստիկան

ՍՊԱՅ. (Դուռը բանալով)։ Կարելի՞ է։

ԱՇՈՏ. Կարող էք։

ԴԱՏԱԽԱԶ. (Ներս մտնելով սպայի եւ ոստիկանի հետ)։ Բարև ձեզ, մենք այստեղ եկել ենք յանուն օրէնքի, խուզարկելու ձեր տունը։

ԱՇՈՏ. Խուզարկելու մեր տունը, և ինչո՞ւ։

ԴԱՏ. Դուք մեղադրւում էք կեղծ դրամներ ծախսելու մէջ։

ՍԱԹ. (Զարհուրուած)։ Ա՜...

ԱՇՈՏ. (Սփրտնած)։ Ներողութիւն, պարոն դատաւոր, ի՞նչ փաստերով...

ԴԱՏ. Փաստ, փաստեր կան...

ԱՇՈՏ. Խնդրեմ...

ԴԱՏ. Իր ժամանակին կյայտնենք, իսկ այժմ թոյլ տուէք խուզարկելու ձեր տունը։

ԱՇՈՏ. Հրամայեցէք, կարող էք։ (Դատախազը եւ ոստիկանները սկսում են նայել ամեն ծակ ու ծուկ, դարակները դուրս են քաշում, զրքերի մէջ նայում, վառարանի մէջ, պատերը ձեռով թխկթխկացնում, բայց սենեակում ոչինչ չեն գտնում։ Այդ ժամանակ Աշոտն ու Սաթենը շուարուած նայում են իրար երեսին եւ նրանց երեսների վրա նշմարւում է զարմանք)։

ՍԱԹ. Աշոտ, ի՞նչ է այս։

ԱՇՈՏ. Ուղիղն ասած՝ չգիտեմ, զարմանում

եմ, ես և կեղծ դրամ. հէնց այժմս էլ իմ գրպանում մէկներ են խաղում, իսկ ինձ մեղադրում են դրամանենգութեան մէջ. չգիտեմ։

ՍԱԹ. Զլինի՞ թշնամութիւն է։

ԱՇՈՏ. Ես թշնամի չունիմ։

ՍԱԹ. Ո՞վ գիտէ...

ԴԱՏ. (Սենեակի խուզարկութիւնը վերջացնելով)։ Այստեղ ոչինչ չկայ, խնդրում եմ մեզ առաջնորդեցէք ձեր տան միւս մասերը, եթէ այնտեղ էլ ոչինչ չգտանք, այն ժամանակ ոչինչ չունենք։

ԱՇՈՏ. Խնդրեմ, խնդրեմ... (Առաջնորդելով)։ Համեցէք։ (Դուրս են գնում)։

ՏԵՍԻԼ 3.

Սաթեն միայնակ

ՍԱԹԵՆ. (Շփոթուած)։ Օ՜, կեանք, հազիւ էի վարդը պոկել և ուզում էի գուրգուրել, գըգուել, դարձեալ փշեր։ Արդեօք ի՞նչ կեղծ դրամներ են, ո՞վքեր են մատնել. ինչ վերաբերում է Աշոտին, նա այդպիսի բաներով երբէք չէ պարապել, բայց թէ ի՞նչու կամ ի՞նչ փաստերով են կասկածում, դա էլ Աստուած գիտէ։ (Մտածելով)։ Զլինի՞ թէ հօրս և այն անամօթ Հաջի-Փիլոսի լարած դարանը լինի. ո՞վ գիտէ. հայրս, որ գձուձ, անխիղճ մարդ է, մի կոպէկի համար կզոհէ ամեն ինչ, իսկ Հաջի-Փիլոսը արդէն յայտնի անձնա-

ւորութիւն է։ Ա՜խ, եթէ այդ այդպէս լինի, ինչ է լինելու իմ դրութիւնը, եթէ իսկապէս այդ մարդիկ սուտ վկաներով հաստատեն և դատապարտուի Աշոտը, այն ժամանակ ինչ եմ անում կեանքը... Կեանք, ինչ բան է, ամեն քայլափոխում ցաւ, վիշտ, հոգեկան փոթորիկ... (Դառն ժպտով)։ Երջանկութիւն, ինչ յիմար բառ, ինչ անբնական դարձուածք. ասել թշուառութիւն, դա հասկանալի է, որովհետև մարդկութիւնը մինչի վիզը միշտ խրուած է դրա մէջ։ (Մայնգալով-ընդմիջում)։ Ինչ յիմար բաներ եմ խօսում, ինչու ես կեանքի մէջ միայն մռայլն եմ տեսնում. Աշոտը արդար է, Աստուած մեզ հետ, ուրեմն նրան չեն կարող դատապարտել։

ՏԵՍԻԼ 4.

Սաթեն, Աշոտ, Դատախազ եւ ոստիկաններ

ԴԱՏ. (Ներս են մտնում Աշոտը յուզուած, սփրտնած, նրա յետեւից Դատախազը, յետոյ ոստիկանները, որոնցից մէկի ձեռքումն է մի կիսաբաց փաթաթոց, որը եւ դնում է սեղանի վրայ)։ Հիմա ինչ կասէք, իմ պարոնս, այս փաստը կարծեմ բաւական է։

ԱՇՈՏ. Պարոն դատաւոր, Աստուած, երկինք, գետին, որ ես չգիտեմ, ես այդ տեսակ բաներով չեմ պարապում։

ՍԱԹ. Սփրտնած մօտենալով Աշոտին)։ Ի՞նչ է, Աշոտ, ի՞նչ գտան, ի՞նչով են մեղադրում։

ԱՇՈՏ. (Ցոյց տալով փաթաթոցը)։ Ահա՛, տեսնում ես, մեր ներքնայարկից գտան այս բոլորը, բայց ո՞վ է դրել, ի՞նչպէս են այդտեղ ընկել, ես այդ չգիտեմ։

ՍԱԹ. Ինչե՞ր են դրանք։

ԱՇՈՏ. Կեղծ դրամի մեքենայ և կեղծ դրամներ։

ՍԱԹ. (Աղիողորմ ճիչով, ձեռները զալարելով)։ Օ՜, դարձեալ փշեր, փուշ, տատասկ... Միայն, միայն փշեր... (Լաց է լինում)։

ԴԱՏ. Աշոտ Ազատեան, ուրեմն խոստովանում էք, որ դուք պարապում էք դրամանենգութեամբ։

ԱՇՈՏ. Ո՛չ, էլի կրկնում եմ, երդւում եմ ամենայն սրբութիւններով, որ ես չեմ պարապել և չեմ պարապում։

ԴԱՏ. Իսկ ո՞րտեղից են այս բոլոր իրերը։

ԱՇՈՏ. Չգիտեմ, պարոն դատաւոր, մի՞թէ ես ընդունակ եմ այդպիսի բաների. հարցրէք մեր հարևաններին, տեղական ոստիկանութեան, բոլորին, բոլորին և վերջապէս ես մի խեղճ, աղքատ ուսուցիչ, ո՞ւր է իմ հարստութիւնը, ես կոպէկներով ապրող մարդ եմ, կեղծ դրամ ոչ տեսել եմ, ոչ տպել և ոչ էլ տարածել։

ԴԱՏ. Է՛, դրանք կեղծ խօսքեր են, ամեն մի մեղադրուող այդպէս է խօսում, դուք փաստ, փաստ բերէք։

ՍԱԹ. (Լացոտ)։ Պարոն դատաւոր, ես կերդու�եմ իմ բոլոր սրբութիւններով, որ Աշոտը անմեղ է, զրպարտութիւն է, թշնամութիւն է...

ԴԱՏ. Ես այդ չգիտեմ, թէ նա անմեղ է, թէ մեղաւոր, բայց փաստերը նրան մեղադրում են։

ԱՇՈՏ. Փաստերը, բայց ինչ փաստեր, կարող է իմ թշնամիներից մէկը բերած և դրած լինի այդտեղ, ուրիշ ինչ փաստ։

ԴԱՏ. Առաջինը, որ փողոցումը բռնուում է մէկի մօտ մի կեղծ հինգ ռուբլիանոց. հարցնում են ոբտեղից, նա ձեզ է ցոյց տալիս. յետոյ գալիս ենք ձեր տուն խուզարկութեան, կեղծ դրամների մեքենան և նոյն հինգ ռուբլիանոցներից ձեր տանն ենք գտնում, բացի դրանից ոստիկանութիւնն էլ տեղեկութիւն ունէր և կասկածում էր։

ԱՇՈՏ. տեղեկութիւն ունէր և կասկածում էր։

ԴԱՏ. Այո, երկու օր առաջ ոստիկանութիւնը մի անանուն նամակ էր ստացել, որտեղ գրում էին, որ դու դրամանենգութեամբ ես պարապում։

ՍԱԹ. (Լալով)։ Սուտ է, պ. դատաւոր, սուտ է...

ԱՇՈՏ. Այժմ ինձ համար մի բան պարզ է, որ սա կազմակերպուած զրպարտութիւն է։

ԴԱՏ. Փաստեր բերէք, փաստեր։

ԱՇՈՏ. Նամակ գրողն էլ իմ թշնամիները են, կեղծ դրամ ծախողն էլ, այս պարագաներն գաղտնի կերպով իմ տան մէջ դնողն էլ։

ՍԱԹ. (Հեկեկալով)։ Օ՜, այդ բոլորը հայրս կլինի արած։

ԱՇՈՏ. (Մեղմութեամբ փաղաքշելով)։ Մի լար, սիրելիս, մի՛ լար, Աստուած ողորմած է, կազատուեմ այս բոլորից։

ԴԱՏ. Պ. Ազատեան, խնդրում եմ, որ իմ հարցերին պատասխանէք և ոչ թէ ուրիշ բաներով պարապէք։

ԱՇՈՏ. (Թողնելով Սաթենին)։ Հրամայեցէք։

ԴԱՏ. Խոստովանուեցէք, որ դուք մեղաւոր էք, այս բոլորը ձեր գործն է և ցոյց տուէք ձեր միւս ընկերները։

ԱՇՈՏ. Պ. դատաւոր, ինչ որ ես չեմ արել, ինչպէս կարող եմ խոստովանուել և ինչպէս ցոյց տալ ընկերներ, քանի որ չունեմ։

ԴԱՏ. Պ. Ազատեան, մեղադրանքը պարզ է, փաստերը ակներև, միայն դուք ցոյց տուէք ձեր ընկերները։

ԱՇՈՏ. Ո՛չ, ես բողոքում եմ, ես մեղաւոր չեմ, դա զրպարտութիւն է. կանչեցէք այն մարդուն, որի ձեռը բռնել էք կեղծ հինգ ռուբլիանոցը, խնդրում եմ կանչեցէք, նա դէմ ու դէմ ուժ չի ունենայ ասելու։

ԴԱՏ. Շատ բարի. (Դառնալով սպային)։ Ներս բերէք այն վկային։ (Սպան գնում է)։ Այժմ կտեսնէք, որ արդարանալը ապարդիւն է։ (Սպան բերում է վկային)։

ԱՇՈՏ. (Տեսնելով վկային)։ Մարտիրոս,

դու, դու ես վկան, ես եմ տուել քեզ կեղծ դրամը։

ՄԱՐՏ. Այո, պ. Աշոտ, յիշում ես այն մի սայլ փայտը որ բերի, դուք այն ժամանակ տուիք։

ԱՇՈՏ. Տо, եղբայր, իմ տուածը սպիտակ փող էր։

ՄԱՐՏ. Ոչ, ոչ, պ. Աշոտ, թղթադրամ էր։

ԱՇՈՏ. Ձեռ ամաչում, մի՞թէ երես առ երես կարելի է սուտ խօսել, խիղճ չունի՞ս, չէ՞ որ դու այդ քո սուտ վկայութիւնով ինձ կխեղդես, կոչնչացնես։

ՄԱՐՏ. Պ. Աշոտ, ես ինչ անեմ, ես գոհ եմ որ բռնուեցի, և եթէ գիտենայի թէ այսպիսի վատ հետևանք կունենայ, մի՞թէ խելագար էի, որ քո անունը տայի, բայց մի անգամ եղաւ, իսկ այժմ էլ չեմ կարող սուտ խօսել։

ԱՇՈՏ. (Ջղաձգաբար)։ Ձես կարող սուտ խօսել... Խեղճ, չես կարող ստել... Իսկ կարող ես մի անմեղի զրպարտել. կարող ես հարևանիդ ոչնչացնել... (Ցոյց տալով Սաթենին)։ Կարող ես այս խեղճին արտասունքների մէջ խեղդել, խեղճ, սուտ չես կարող խօսել...

ՄԱՐՏ. Ես ինչ անեմ, պ. Աշոտ, ինձ էլ շատ ցաւ է, բայց երդումով կհարցնեն, ես չեմ կարող ստել։

ՍԱԹ. (Ցուզուած)։ Մարտիրոս, Մարտիրոս, ի սէր քս որդկերանց, ի սէր քո մօր դերեզմանի, ի սէր քո սրբութիւնների, ճշմարիտ ասա, քեզ ո՞վ կաշառեց։

ՄԱՐՏ. Քոյրս, ինչե՞ր ես ասում, մի՞թէ ես անհաստուած եմ, ինչ կաշառք, ինչ բան, չէ՞ որ մենք էլ մարդ ենք, մենք էլ հոգի ունենք։ Ես ինչ անեմ, ինչ մեղաւոր եմ... Այ ոտս կոտրուէր, որ ես այն օրը ձեզ փայտ չբերէի։

ԱՇՈՏ. Ուրեմն պնդում ես։

ՄԱՐՏ. Այո, սուտ չեմ կարող խօսել, վախենում եմ խաչ աւետարանից, հոգի ունիմ տալու։

ՍԱԹ. (Ձոքելով Մարտիրոսի առաջ)։ Աղաչում եմ, պաղատում, ասա՛, ասա՛, ո՞վ կաշառեց քեզ։

ՄԱՐՏ. (Վեր կացնելով)։ Մեղա՛յ, մեղա՛յ, ի՞նչ ես անում քոյրս, ես ո՞վ եմ, որ իմ առաջ չոքում ես։ Աստուած, երկի՞նք, գետի՞ն, որ ես ոչինչ չգիտեմ. այն օրը սև լինէր, որ չբերէի մի սայլ փայտը և ինձ չտայիք այդ թերմաշը։

ԱՇՈՏ. Ուրեմն պնդում ես։

ՄԱՐՏ. Ես ինչ կարող եմ անել, ես չեմ կարող ստել։

ԱՇՈՏ. (Ցուզուած)։ Պ. Դատաւոր, այլևս ես ոչ մի պաշտպանութեան բան չունեմ, քանի որ մարդիկ այնքան լիրբ են, այնքան անխիղճ, որ երես առ երես ստում են, ուրեմն ես մեղաւոր եմ, վարուեցէք ինձ հետ, ինչպէս կամենաք։

ԴԱՏ. Պ. Ազատեան, առ այժմ քանի որ փաստերը այսպէս են դասաւորուած, ես պարտաւոր եմ քեզ կալանաւորել, մինչև որ կտես-

նենք, ինչ նոր փաստեր երևան կգան, ուրիշ փաստերով կարող էք հերքել այս մեղադրանքը։

ԱՇՈՏ. (Ցուզուած)։ Ոչ մի փաստ չունեմ, տարէք ուր որ կամենաք։

ՍԱԹ. (Լացով փարուելով Աշոտի վզին)։ Աշոտ, Աշոտ, ինչո՞ւ ես խօսում, ո՞ւր ես գնում, դու կալանաւո՞ր... (Հեկեկում է)։

ԱՇՈՏ. (Կրծքին սեղմելով, փղձկուած)։ Ա՜, Սաթեն, Սաթեն, ես դրամանենդ եմ, ես կեղտոտ եմ, գող եմ, աւազակ, խարդախ, ես, ես... Օ՜, հասարակութեան վատ անդամ եմ.—(Հեկեկում է)։ Ե՛ս... Օ՜, իմ թշուառ Սաթեն, այժմ ես մեռած եմ բարոյապէս... Իմ պատիւը, իմ նամուսը, իմ գուրգուրուած սէրը ինձ համար կորաւ... ա՜...

ՍԱԹ. (Լացով)։ Մի ասիր Աշոտ, մի ասիր, դու անսեղ ես, այդ գիտեն բոլորը, մի ասիր...

ԴԱՏ. Պ. Ազատեան, բաւական է, ես ժամանակ չունեմ, գնանք գրասենեակ. այնտեղ արձանագրութիւն կկազմենք և յետոյ քեզ կուղարկենք բանտ։

ԱՇՈՏ. Գնանք... (Ցուզուած Սաթենին փարուելով)։ Մնաս բարեաւ, սիրելիս, մնաս բարեաւ, իմ գուրգուրած, իմ փայփայած սէրս... Ա՜, այլևս ո՞վ գիտէ մէկ էլ ե՞րբ...

ՍԱԹ. (Աշոտը դատախազի եւ ոստիկանների հետ գնում է. Սաթենը Աշոտի յետեւից աղէկտուր)։ Աշո՜տ, Աշո՜տ, իմ սէր, կեանքի փշերը դարձեալ ծակոտեցին իմ ձեռները... Դարձեալ

փուշ, միայն փուշ մեր չորս կողմը... (Ջղաձգաբար լաց է լինում. այդ ժամանակ զունաթափ, յուզուած ներս է մտնում Միսակը եւ մոտենում Սաթենին)։

ՏԵՍԻԼ 5.

Սաթեն եւ Միսակ

ՄԻՍ. Քոյր, քոյր, արիացիր, Աստուած ողորմած է։

ՍԱԹ. (Տեսնելով Միսակին եւ ընկնելով նրա թեւերի մէջ)։ Ա՜, Միսակ, թշուառ ենք մենք, թշուառ...

ՎԱՐԱԳՈՑ

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ Դ.

Տեսարանը ներկայացնում է միջակ մեծութեամբ մի սենեակ, մի դուռ, աջ և ձախ երկու պատուհան, պատերը սպիտակացրած, բեմի խորքում մի պարզ մահճակալ, կարկատած, բայց մաքուր անկողինով, որի մէջ պառկած է հիւանդ Միսակը։ Այս ու այն կողմը հին աթոռներ, բեմի աջ կողմը պատուհանի տակ մի կիսամաշ, հին սեղան, բայց մաքուր սփռոցով, որի վրայ կայ մի հասարակ լամպար։ Սենեակը անշուք, իրերը, առարկաները մաշուած, բայց խստակ։

ՏԵՍԻԼ 1.

Անտօն, Մարթայ, Սաթեն եւ Միսակ

(Միսակը հիւանդ, սարսափելի կերպով մաշուած քնած է անկողնում. Մարթան նրա մօտ նստած, թաշկինակը աչքերին, լուռ լալիս է, նրա մօտ կանգնած է Սաթենը տխուր, իսկ Անտօնը մըտածկոտ յետ ու առաջ է գնում անշշուկ, տէրողորմեան քաշելով. խօսակցութիւնը կատարւում է կիսաձայն։

ԱՆՏ. (Կանգնելով)։ Մի լաւ, Մարթայ, Աստուած ողորմած է, Միսակը շատ լաւ է և Աստուծով Սաթենիս հարսընտեսն էլ մի շաբաթից կանենք. Հաջի-Փիլոսը շատ է շտապում։

ՄԱՐԹ. (Հեգնելով)։ Լաւ է, շատ լաւ է... ի հարկէ մի շաբաթից հարսընտեսը կանենք... Անտօն, ինչեր ես խօսում, Միսակը էլ մեզ օգուտ չունէ, նրա բանը պրծել է։

ՍԱԹ. Մի՛ ասիր, մայրիկ։

ՄԱՐԹ. Էհ, Սաթեն, ինչ ասեմ, Աստուած տայ, որ այդպէս լինի, բայց... (Լուռ լալիս է)։

ԱՆՏ. Դէ՛, վերջ տուր, ինչո՞ւ ես կենդանի մարդու վրայ լաց լինում։

ՍԱԹ. (Լացկոտ)։ Մայրիկ, վերջ տուր, Միսակը լաւ է։

ՄԱՐԹ. (Աչքերը սրբելով եւ դառնալով Անտօնին)։ Մարդ Աստուծոյ. մի բժիշկ բեր, մի՞ ճար արա, այդպէս չի լինի, ախը բոլորովին ուշադրութիւն չես դարձնում տղի վրայ։

ԱՆՏ. Էլի բժիշկ, ա՛յ կին, ասում եմ, որ բժիշկ, դեղ դատարկ բան է, եթէ Աստուած ուզում է, որ մարդս ապրէ, կապրէ։

ՍԱԹ. Հայր, բեր, ինչ կայ որ, թող օգուտ չունենայ, բայց էլի յոյս է։

ԱՆՏ. Է՛, յիմարներ, եթէ օգուտ չունի, էլ ինչո՞ւ բերեմ, աւելորդ փող ունե՞մ, որ այդ խաբեբաներին տամ. ո՛չ, աւելի լաւ է աղօթենք և մեր յոյսը Աստուծոյ վրայ դնենք։

ՄԱՐԹ. Մեռնիմ Աստուծոյ ողորմութեանը, նրա ողորմութիւնը անչափ է, հէնց նրա ողոր-

մութիւններից մէկն էլ դեղն ու բժիշկն է, այդ բաները ստեղծել է, որ մարդիկ հիւանդ ժամանակները օգտուեն։

ԱՆՏ. Հերիք է, դատարկ-դատարկ դուրս տաս, ես այդ խաբեբաներին լաւ եմ ճանաչում, նրանք որ կան, փողի թակարդ են, եթէ բժիշկ բերեմ, գիտեմ, որ Միսակը էլ անկողնուց վեր կենալու չէ. նրան մի այնպիսի դեղ կտան, որ ոչ առողջանայ, ոչ էլ մեռնի, որպէս զի իրենք օգտուեն այդ բանից և փող կորզեն... Դարձեալ կրկնում եմ, որ յոյսերդ Աստուածանից միք կարի։

ՍԱԹ. Հայր, ձրի բժիշկ էլ կայ, բարեգործական ընկերութիւնից խնդրիր, նրանք թէ բժիշկ և թէ դեղ կուղարկեն։

ԱՆՏ. Ես չեմ կարող խնլոտ ճլոտ մարդկանց բան խնդրել։

ՄԱՐԹ. Ես կխնդրեմ, ձեռքերը կհամբուրեմ կաղաչեմ, որպէս զի ուղարկեն. կարելի է մի ճար լինի, ինչ ձիւն տամ գլխիս եթէ... (Լաց է լինում)։

ԱՆՏ. Բարեգործական ընկերութիւնից կը-խնդրես, այ կին, քեզ ոչ բժիշկ կուղարկեն ոչ էլ դեղ։

ՄԱՐԹ. Ինչու։

ԱՆՏ. Ես ինչ գիտեմ, մի քանի ժանգոտ կոպէկս նրանց աչքին բան է երևում, ասում են հարուստ ես, դուն էլ կարող ես։

ՍԱԹ. Փորձիր, հայր, ով գիտէ, կարելի է խղճացին, կարելի է յարգեցին խնդիրդ։

ԱՆՏ. Փորձել եմ աղջիկս, փորձել, բայց անպատուելով, դուռը երեսնիվերս ծածկեցին... Է՛ այժմեան մարդիկը լիրբ են։

ՄԱՐԹ. Ա՛յ մարդ, դէ գոնեայ փողոցից մի հաւ, մի երկու ֆունտ միս առ հիւանդի համար, որպէս զի սնունդ լինի։

ԱՆՏ. Էլի ասում է. այ կին, հազար անգամ ասել եմ, որ հիւանդի համար միսը ընասակար է, չի կարող մարսել, նրան դիւրամարս կերակուր է պէտք, դիւրամարս, հասկանում ես, թէ ոչ...

ՄԱՐԹ. (Զուզուած)։ Բաւական է, բաւական, թող վերջապէս գձուձութիւնդ։ Բժիշկ չես բերում, թէ խաբեբայ են, միս չես բերում, թէ դիւրամարս չէ, սպիտակ հաց չես առնում, ասում ես, որ հիւանդի համար սեր լաւէ։ Մի խօսքով, որպէս զի կոպէկ չծախսես, էլ ինչ յիմարութիւններ ասես, որ չես անում... Էլ բաւական է, այսօր կերթամ, կնկնեմ փողոցները, կմուրամ, կաղաչեմ, կպաղատեմ և տղիս համար բժիշկ, դեղ ու սնունդ կառնեմ... Ամօթ, ամօթ քեզ, մեռնում է տղադ, տես, տես ինչ օրի է, այժմս էլ կոպէկդ թանգ է այս ցաւագար—թշուառից.. (Լաց է լինում)։

ՍԱԹ. Հայր, հայր, Աստուծոյ սիրուն, մի ճար, մի օգնութիւն, խեղճ եղբայրս շատ ծանր դրութեան մէջ է։

ԱՆՏ. Օ՛, էլի սկսեցին. լաւ, լաւ, գնամ միս, հաց բերեմ, պրծանք. հօ էլ բան չէք ուզում։

ՄԱՐԹ. Դէ շուտ արա, օրը ցերեկ է եղել։

ԱՆՏ. Ահա, ահա գնում եմ. Օ՛... էգուց էլ մի բան լինի, ինձ պիտի մեղադրեն։ (Դուրս է գնում)։

ՏԵՍԻԼ. 2.

Նոյնի առանց Անտոնի

ՍԱԹԵՆ. Մայրիկ, դուն էլ գնա Բարեգործական ընկերութիւնից խնդրիր, կարելի է քո խընդիրքը յարգեն։

ՄԱՐԹ. Մայրդ ինչ ձիւն տայ գլխին, գիտէս այն ժամանակ ինչ կբերէ իմ գլխին հայրդ։

ՍԱԹ. Երբ նրանից փող չի գնում, նա ամեն բանի հաժաձայն է։ Ա՜խ, մեր թշուառութեան պատճառը հօրս անչափ փողասիրութիւնն է։

ՄԱՐԹ. Զգիտեմ, չգիտեմ, Աստուծոյ պատուհաս է, խեղճ երեխաներիս ջարդեց ու թողեց։

ՍԱԹ. Հիւանդութիւն է մայրիկ, ինչպէս որ մեզ է զրկում, այնպէս էլ ինքն է զրկուած... Դէ գնա մայրիկ քանի ուշ չէ, ուզում ես ես կգնամ։

ՄԱՐԹ. Ո՛չ, ո՛չ, դու կաց, ես կգնամ։ (Վերցնելով շալը)։ Սաթեն, Միսակին լաւ նայիր, ես իսկոյն կգամ։ (Գնում է)։

ՏԵՍԻԼ 3.

Սաթեն եւ Միսակ

ՍԱԹԵՆ. (Ուղղելով եւ ծածկոտելով Միսակին, որը ղեռ քնած է, յետոյ Միսակի մօտ աթոռի վրայ նստելով)։ Ի՞նչ դրութիւն է մեր դրութիւնը, ապրում ենք խեղճ, քաղցած, մաշուած. զուրկ ենք բարեկամների, ազգականների զգուանքից։ Բոլորի ծաղրի, ծանակի առարկան մենք ենք և այս բոլորը ինչո՞ւ, որովհետև հայրս բարոյապէս հիւանդ է, ժլատ է, ագահ... Եւ այդ բոլորի հետևանքն այն է, որ մայրս դժգոհ այս բոլորից, ջղերը միշտ գրգռուած, հասել է ապշութեան. հայրս ոսկին ամուր պահելու համար դառել է մի անտանելի, մի անզգայ մարդ. եղբայրս ահա մահամերձ ընկած է անկողնում, իսկ ես... Վա՛յ ինձ... Բռնի զսպում եմ ցաս, կուլ եմ տալիս արտասունքս, խեղդում վիշտս, բռնազբոսիկ ժպտում, հաճոյանում հօրս, որպէս զի եղբայրս, այս խեղճ, անճար, նահատակ էակը և մայրս, այդ բազմաչարչար Մարտիրոսը, այդ ագահութեան, ժլատութեան ճանկերի տակ ճմլուած ծնողս, գոնեայ ինձանով մխիթարուեն, գոնեայ նրանց վշտի, լացի, արցունքի արանքից, ժամանակ առ ժամանակ իբր յուսոյ ճառագայթ, փայլատակէ իմ կեղծ խինդն ու ժպիտը։ Բայց անտանելի է, անտանելի, թոյլ եմ, անզօր եմ, չեմ կարող մինչև վերջը տանել՝ զրկանքը ահագին է. դեռ մի

կողմը այս բոլորը, միւս կողմից էլ իմ հոգին տանջում է իմ հեգ Աշոտը... նա ինչով է մեղաւոր, որ այժմ մութ բանդում ֆիզիքապէս և բարոյապէս տանջուելով, սպասում է իր վճռին և ոչ գիտէ թէ էգուց էլ դէպի ո՞ւր պիտի առաջնորդէ խեղճին կոյր բախտը. դէպի հիւսիս, դէպի յաւիտենական սառնամանիք, թէ՞ դէպի մութ բանդերի խեղդող որջերը... և այս բոլորը ինձ համար... այս բոլորի հեղինակը հայրս... Հայր, հայր, ո՜հ ինչո՞ւ պատճառ դառար ինձ այս փշոտ աշխարհը մտնելու և ինչո՞ւ այսօր էլ տանջում ես ոչ միայն մեզ, այլ մեզ հետ և ուրիշներին... Եւ դեռ չնայած այս բոլորին, նա դեռ ինձանից պահանջում է իմ համաձայնութիւնը Հաջի-Փիլոսի հարսը լինելու...

ՄԻՍ. (Ցանկարծ ձեռները պարզելով և գոչելով)։ Մի՛, մի՛... թող... բաւական է։

ՍԱԹ. (Ծռվելով դէպի հիւանդը)։ Ի՞նչ է. Միսակ։

ՄԻՍ. (Թոյլ)։ Ա՜խ քոյր, դո՞ւ ես... Սաթեն, ո՞ւր է այն գեղեցիկ պատանին։

ՍԱԹ. Ո՞ր։

ՄԻՍ. Քիչ առաջ որ այստեղ էր։

ՍԱԹ. Այստեղ ոչ ոք չկար։

ՄԻՍ. Ո՛չ, կար, կար... դու այնտեղ չէիր, միայն ես և նա էինք։

ՍԱԹ. Երազ կլինի, Միսակ։

ՄԻՍ. (Հիւանդ ժպտով)։ Հ՛ը, երազ... ամեն

բան էլ երազ է և ինչ գիտենք, որն է իրականութիւնը։

ՍԱԹ. Քաղցած չե՞ս Միսակ, մի բան բերեմ կեր։

ՄԻՍ. Սաթեն, Օ՜. քիչ առաջ ես շատ լաւ տեղ էի, ափսոս, ափսոս, ո՞րքան մարդիկ երջանիկ էին այնտեղ... Ո՞րքան գրաւիչ էր այն։

ՍԱԹ. Ի՞նչ մարդիկ, ո՞րտեղ...

ՄԻՍ. Է՛ սիրելի քոյր, զո՞ւր թողի, զո՞ւր...

ՍԱԹ. Միսակ, ինչեր ես խօսում, երազ կլինի...

ՄԻՍ. Երազ... հա, կարելի է, միայն լաւ էր... Սաթեն, ես իրը թէ ծաղկոտ բլրակի լանջին եմ և մտիկ եմ տալիս դէպի քաղաք... բայց ինչ որ տարօրինակ բաներ եմ տեսնում, քաղաքը բոլորովին փոխուել է, էլի միյարկանի, բայց շատ գեղեցիկ տներ, լայն փողոցներ, երկու կողմը ծառուղիներ, տների յետևը գեղեցիկ պարտէզներ, չորս կողմը ծառ, ծաղիկ, աղբիւր, իսկ այդ բոլորի մէջ մարդիկ, բայց ոչ մեզ նման... ուրախ, զւարթ, երջանիկ...

ՍԱԹ. Դէ փառք Աստուծոյ, ի հարկ է երջանիկ կլինեն։

ՄԻՍ. Թող, թող պատմեմ... Շուրջս եմ նայում, որպէսզի մէկին տեսնեմ և հարցնեմ թէ սխալ հո չե՞մ և քիչ հեռուն տեսնում եմ մի սիրուն պատանի, բարևում եմ, նա հարցնում է. «ինչ ես կամենում...»

ՍԱԹ. Միսակ, կյոգնես, վերջ տուր...

ՄԻՍ. Թող Սաթեն, թող պատմեմ... Ես հարցնում եմ, այս երևացող քաղաքը—Նոր-քաղաքը—չէ՞... «Այո՛» պատասխանեց նա է, «եթէ կամես գնանք»։ Այս ասելով, նա իմ ձեռից բռնած քայլերը ուղղեց դէպի քաղաք... Մենք սկսեցինք արագութեամբ իջնել, մի երկու բոպէից քաղաքումն էինք, բայց ո՞վ զարմանք, ձորերը, ժայռերը, լեռները, բնութիւնը նոյն իսկ մարդիկ և հիմնարկութիւնները փոխուած։ Տները միատեսակ, վերին աստիճանի պարզ ճաշակով և գեղեցիկ... Փողոցները մաքուր... չորս կողմը վճիտ աղբիւրներ... ծառեր, ծառեր, ու ծառեր... Իսկ մարդիկ ուրախ զուարթ, անհոգ, երջանիկ։ Ես ապշած շուրջս եմ նայում, իսկ նրանք ապշած ինձ են նայում... Ես ամաչում եմ իմ մաշուած երեսից, իմ անճոռնի հագուստից... Իսկ նրանք ցաւակցում են ինձ... Վերջապէս, երկար շրջելուց յոգնած, առաջարկեցի ընկերիս, որ քաղցած եմ, գնանք մի բան առնենք. նա ապուշ կարած նայում է ինձ և հարց տալիս։ «Առնե՞լ...» Հա՛, մի երկու ֆունտ հաց առնենք, ամաչում էի ցոյց տալիս մի հինգ կոպէկանոց. նա զարմացած պատասխանում է ժպտալով. «բարեկամ, դա փող է, իսկ փողը դարեր առաջ ուժ ունէր, այժմ ամեն բան ձրի է...» Ձրի՞, ո՞չ, ո՞չ, անկարելի է, ո՞վ ձրի ինձ հաց կտայ... ասում եմ ես. «կտան, կտան.» ժպտալով պատասխանում է նա. «փողը ուժ ունէր յիմարութեան շրջանում, իսկ այժմ

երջանկութեան շրջան է...» (Հազում է)։ Մի ջուր տուր Սաթեն։

ՍԱԹ. (Ջուրը տալով)։ Բաւական է, Միսակ։

ՄԻՍ. (Ջուրը խմելով եւ բաժակը վերադարձնելով)։ Լաւ, Սաթեն, կարճ կպատմեմ... (Քիչ կանգ առնելով եւ հազալով)։ Յիմարութեան շրջանն... աչքերս չռած հարց եմ տալիս ես. «Այո՛» պատասխանում է նա. «Դա դարեր առաջ էր, իսկ այժմ ո՞չ փող կայ, ո՞չ հարստութիւն, ո՞չ զրկանք, ո՞չ բարիք, ո՞չ չարիք... Այժմ բոլորը երջանիկ են, որովհետև բնութեան հարստութիւնը բոլորինն է և դրա համար չկայ ագահութիւն... ագահութիւն չլինելով, չկայ բռնութիւն, կեղեքում, գողութիւն, սպանութիւն...դրանք չլինելով, չկայ թշուառութիւն, այլ կայ միայն երջանկութիւն, դրա համար այժմ բոլորը երջանիկ են, իսկ շրջանը կոչւում է երջանկութեան շրջան... Իսկ հին դարերում, երբ ոսկին էր իշխում, իմաստուն մարդիկ կոչեցին այդ շրջանը—յիմարութեան շրջան։—Ուզում ես գնանք յիմարութեան շրջանի թանգարանը, ցոյց տամ քեզ—Ոսկու կուռքը—, որին մի ժամանակ երկրպագում էին մարդիկ...» Այս ասելով, ինձ քաշ տուեց դէպի թուխ քարից շինուած մի մռայլ շինութիւն, երկաթեայ հաստ դռներով, որի դռան վերևը գրուած էր մեծ, մեծ տառերով. «Յիմարութեան շրջան...» Ներս մտանք, դռան յետև ինձ դէմ դիպան երկնագոյն քարից կերտուած երկու խոժոռ մարդիկ. ես ցնցուեցի՝ տեսնելով ինձ ծա-

նօթ դէմքեր. ընկերս ժպտաց և ասաց. «Մի վախիր, դրանք դարեր առաջ էին, իսկ այժմ քարից են շինուած...» Այս ասելով շտապ առաջ անցանք, իմ աչքերին մէկը միւսի յետևից պատկերանում էր մեր կեանքը, թշուառութեան և զրկանքի մի քաօս. այդ բոլորը տեսնելով, յուզուած՝ ես լաց էի լինում, իսկ իմ ընկերը ժպտում... Սաթեն, մի ջուր... վառւում եմ։

ՍԱԹ. (Ջուրը տալով)։ Բաւական է, Միսակ... (Ձեռը ճակատին դնելով)։ Տես, որքան տաք ես...

ՄԻՍԱԿ. (Դող, դող, նուազ ձայնով)։ Թող վերջացնեմ... (Կանգ առնելով եւ յետոյ շարունակելով, կերկեր)։ Պատանին տեսնելով իմ արտասունքը, քաշ տուեց ձեռիցս, տարաւ առաջ և մատով ցոյց տալով, ասաց։ «Ահա, տես...» Եւ ուղիղ. իմ աչքին պատկերացաւ բրոնզից ձուլուած մի հուժկու մարդ, լայն թիկունքով, հաստ բազուկներով, անյողդողդ ոտներով և խոժոռ դիմագծերով մի ահարկու արձան, որի յաղթ տեսքը ցոյց էր տալիս նրա անպարտելի, հսկայական ուժը և որի ճակատին գրուած էր—Ոսկու կուռք...—Կուռքը աջ ձեռով բռնած ունէր մի դրօշակ, որի վրայ լուսեղէն տառերով գրուած էր... (Ցոյց տալով, Երեւակայութիւնը խառն)։ Տես Սաթեն, այժմս էլ է երևում... Տես... (Իրը կարդում է)։—Ես եմ այն, որ կքանդեմ, կկրակեմ, կաւերեմ գիւղեր, քաղաքներ։ Ես եմ այն, որ հսկայական մարդկային սպանդանոցներ կստեղծեմ,

որտեղ բիւր բիւրոց մարդիկ զոհ կլերուեն ինձ, որտեղից արեան գետեր բղխելով, կարմիր կներկեն լեռներ ու դաշտեր... Ես եմ այն, որ հրդեհների բոցով կլուսաւորեմ աշխարհը, իսկ լաց ու կականով կլցնեմ երկիր... Ես եմ այն, որ հարազատը հարազատի դէմ կկանգնեցնեմ, մարդը կնոջ, եղբայր եղբօր, որդին հօր... Ես այն եմ... հզօր, անպարտելի, հուժկու, կդողայ ինձանից աշխարհը...Լսիր, որքան սրտառուչ, որքան քստմնեցնող նուագ է, գիտէք ինչ երաժիշտներ են և ինչ երաժշտական գործիքներ։ Դա անտերունչ որբիկի աղէխարշ հոգոցն է, թշուառ այրիի ողբ ու լացն է, մերկանդամ աղքատի ցրտից սրբսրռացող ատամների կթկթոցն է... Լսիր, և ականջիդ է հասնում ծիծաղի, քրքիջի ու անհոգ խօսակցութեան ձայներ, լսում ես գոռ նուագը, երգն ու տաղը...

ՍԱԹ. Միսակ, ինձ լսիր, թող դրանք։

ՄԻՍ. Սաթեն, Սաթեն, ինչու ես խանգարում... Տես, տես, դրանք երջանիկ մարդիկ են, որոնք գալիս են արձանին երկրպագելու... Չէ՞ս տեսնում, Սաթեն, գունդագունդ մարդիկ են գալիս աղօթելու չաստուածին... Օ՜, տես, անընդհատ գլուխների շարքեր... խունկ, մոմ և անպայման հնազանդութիւն... Ահա, ահա, չաստուածն էլ հրճուեց։ Օ՜, ինչ դիւային պար սկսեց, պար, որի ամեն մի թռիչքը օրհասական է նրա համար, ով չաստուածի ոտների տակ կընկնէ, իսկ հրճուանք ու բերկրանք է նրա համար, ով ճար-

պիկութեամբ կընկնէ չաստուածի գիրկը և կվայելէ նրա անսահման բարիքը...

ՍԱԹ. Միսակ, Միսակ...

ՄԻՍ. (Աչքերը շռած նայելով Սաթենին)։ Սաթեն, դու ես... (Ընդմիջում)։ Հա, չաստուածը դեռ պարում է, իսկ նրա շուրջը պարում է ամբողջ մարդկութիւնը, պարում և չի յագենում... Սաթեն, Սաթեն, հայրս էլ... տես... պինդ բռնած մօրս մազերի ծամերից, մարդկանց շարքերը ճեղքելով, քաշում է նրան դէպի չաստուածը... Ա՜, ուզում է չաստուածի ոտների տակ նրան էլ զոհել... (Ճչալով ձեռները մեկնած)։ Մի՛, մի, թող, բաւական է...

ՍԱԹ. Միսակ ինչո՞ւ ես ասում...

ՄԻՍ. (Մոլոր շուրջը նայելով)։ Սաթեն դու՞ ես... Մի՛ ջուր... Օ՜, օդ, օդ... (Սաթենից առնելով բաժակը, դողդող խմում է ջուրը և բաժակը յետ տալիս)։ Կուրծքս... Սաթեն, կուրծքը... Օ՛դ, օդ տուր... Օ՜ Աստուած... Սաթեն, ինչու մթնեց... (Հիւանդ ժպտով, երեւակայութիւնը նորից խառնուելով)։ Հա, դէպի երջանկութիւն, դարձեալ եկար պատանի... ահա եկայ, մի՛ թողնիր ինձ... քոյր, Սաթեն... գնում եմ, գնում դէպի երջանկութիւն... (Ձեռները թուլանում, ընկնում են և մեռնում է)։

ՍԱԹ. (Շփոթուած, վախեցած, յետոյ ականջը մօտեցնելով բերանին, կրծքին, աղիողորմ ճչում)։ Մեռա՛ւ, մեռա՛ւ... Միսակ, Միսակ... (Կանգ առնելով եւ մտածելով, յետոյ հանգիստ)։

Բայց նա ասում էր, որ գնում է դէպի երջանկութիւն, ուղիղ որ երջանկութիւն։ Տեսէք, տեսէք, ո՞րքան հանգիստ է, ոչինչ չի զգում, նա այլևս ոչ մի տենչ, պահանջ չունէ... հանգիստ է, շատ հանգիստ... իսկ ես, ես թշուառս... Օ՜, պէտք չէ ինձ կեանք, պէտք չէ լոյս, արև, մարդիկ, պէտք է հանգստութիւն, յաւիտենական հանգիստ, որի մէջ է և երջանկութիւնը... (Շտապ, շտապ բանալով սեղանի արկղը եւ այնտեղից հանելով մի փոքրիկ փաթաթոց, փաթաթոցը ձեռի մէջ բռնած)։ Ահա իմ հարսնտեսի հրաշալի ընծան... Ո՛չ, հայր, սխալուում ես, մի՞թէ Հաջի-Փիլոսի ոսկին ինձ համար աւելի արժէք ունի, քան թէ սա... Օ՜, զօրեղ, ազդու բալասան, ես վաղուց էի քեզ գգուում, գուրգուրում, վաղուց էի ուզում, որ քեզանով վերջ տամ ցաւերիս, բայց խղճում էի ցաւագար եղբօրս, որպէսզի նրա խոցոտ սիրտը աւելի չմորմոքեցնեմ. խղճում էի մօրս, որպէսզի թշուառը բոլորովին չցնդվէր, խղճում էի Աշոտիս... Աշո՛տ, Աշո՛տ, ներիր ինձ, միևնոյն է, այլևս իրար հետ չենք կարող լինել, ուր հիւսիսի հանքերում աշխատող շոթայակապ բանւորը, ուր ես խեղճ անճարս... ներիր և դու մայր, բազմաչարչար, կեղեքուած խեղճ կին... (Ղաց լինելով)։ Չեմ կարող, թոյլ եմ. հանգիստ, հանգիստ եմ որոնում... (Մեղմ ժպտալով եւ թղթէ փաթաթոցը դիտելով։) Զարմանք, Ամբողջ մարդկութիւնը իր իմաստութեամբ, հարստութեամբ այն չեն կարող անել, ինչ որ անում է այս չընչ-

չին փոշին... Դու բարի ես, դու աւելի գթացող ես, որովհետև մարդիկ իրենց կրքերով խանգարում են իմ հանգիստը, իսկ դու քո ոչնչութիւնով հանգիստ ես պարգևում ինձ, իմ տենչանքին լիութիւն տալիս... (Շտապ առնելով բաժակով ջուրը, դողդող բանալով փաթաթոցը, փոշին ջրի մէջ է լցնում. յետոյ բաժակը բարձրացնելով): Դժուար է, դժուար, կեանքը քաղցր (Բաժակը յետ դնելով): Ո՛չ, ո՛չ... դաժան... դերեզման... սարսափելի է... կեանքը քաղցր է... բայց ուր պարտեմ իմ մորմոքը. իմ վիշտը, իմ լեռնացած ցաւը... Ո՞ւրէ իմ Աշոտը, ուրէ Միսակը... չկան, թշուառ եմ, թշուառ... Ո՞ւրէ գոնեայ երջանկութեան փոքրիկ նշոյլն անգամ... (Առանց երեսը դարձնելու, խլում է բաժակը եւ կուլ տալիս հեղուկը): Վերջացաւ, պրծաւ, մի քանի րոպէ միայն հիւր եմ այս աշխարհում, իսկ յետոյ դէպի անհունը... (Նստելով Միսակի մահճակալի ափին, գգուելով Միսակին եւ շփելով մազերը): Միսակ, Միսակ, ես էլ եկայ դէպի քեզ, ուրէ պատանին, թող ինձ էլ առաջնորդէ դէպի երջանկութիւնը... Օ՜, որքան սառն ես, բայց և այնպէս որքան հանգիստ... (Դուռը բացւում է, ներս է մտնում Մարթան. Սաթենը սփրտնած վեր թռչելով. կանգնում է):

ՏԵՍԻԼ 4.

Նոյնի եւ Մարթա

ՄԱՐԹ. Սաթեն, ի՞նչու ես այդպէս դժգոյն։

ՍԱԹ. Ոչինչ։

ՄԱՐԹ. (Ահաբեկ)։ Միսակը ի՞նչպէս է։

ՍԱԹ. Լաւ է, քնել է։

ՄԱՐԹ. Քնել է՞... Իսկ դու ինչու ես դողում։

ՍԱԹ. Ոչինչ... այնպէս... Օ՜, Մայր, մայր... (Թուլացած ընկնում է աթոռի վրայ)։ Արիացիր, բան չկայ... Միսակը լաւ է... (Դողում է)։

ՄԱՐԹ. (Սարսափած)։ Սաթեն, Սաթեն...

ՍԱԹ. (Դողդողալով, աթոռի վրայ յետ ընկնելով եւ մռնռնելով)։ Մայր, մայր...

ՄԱՐԹ. (Հեծկլտոցով աղիողորմ)։ Սաթեն, աղջիկս... ի՞նչ ձիւն տամ գլխիս, ի՞նչ անեմ... Սաթեն... (Մազերը պոկելով)։ Վայ իմ ջիւան բալաս... թոյն, թոյն ես ընդունել... (Ծնկերին խփելով)։ Օգնութիւն, օգնութիւն... Միսակ, Միսակ, քոյրդ... (Նայելով Միսակին, յետոյ սփրտնած, մազերը քիզ քիզ յետ ընկնելով եւ թիզը կանգնելով, աղիողորմ, սառն)։ Միսակն էլ... հա, Միսակն էլ... (Մի երկու վայրկեան լուռ, յետոյ զարհուրելի ձչով)։ Արցունք չկայ— չորացել է, ջղեր չկայ—մաշուել է, հառաչ չկայ —խեղդուել է... ես, ես... (Ընդմիջում, յետոյ ցընցվելով խելառ)։ Բայց... ես խենթ եմ, Մի-

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
им. А. Мясникяна

սակս հանգիստ քնել է, Սաթենս էլ նոր է աչքերը փակել, իսկ ես գոռ ու գոչումով խանգարում եմ նրանց քունը... (Խելառ)։ Սուս, սուս ցնդած կին... (Խելառ խելառ ծածկում է Մելսակին, գրկում է Սաթենին եւ նստելով յատակին զգուշութեամբ հաժբուրում է Սաթենին)։ Քնել են բալաներս, քնել...

ՏԵՍԻԼ 5.

Նոյնք եւ Անտոն

ԱՆՏ. (Մռայլ ներս մտնելով եւ միսն ու սպիտակ հացը շալրտելով սեղանի վրայ)։ Պրծանք, ահա հացն ու միսը։ (Քիչ առաջ գալով տեսնում է Մարթային գրկած Սաթենին, վախեցած կանգ է առնում, մեղմ)։ Մարթա, Մարթա, ի՞նչու ես գրկել Սաթենին...

ՄԱՐԹ, (Խելառ, կատաղի հայացքը զցելով ղէպի Անտոնը, կամացուկ)։ Սուս, սուս, քնել են բալեքս...

ԱՆՏ. (Սփրտնած թաթերի վրայ առաջ է գալիս ղէպի Մելսակը եւ խայթուածի նման յետ ընկրկելով)։ Մեռած է... (Յետոյ սարսափահար յետ է նայում ղէպի Սաթենը)։ Սաթենն էլ... (Մռայլ, խոժոռ, սարսափած)։ Իսկ կինս էլ խենթացել է... ~~(Մի երկու վայրկեան լուռ, մտատանջուած, յետոյ սկսում է մեղմ լալ եւ թաշկինակով աչքերը սրբելով)։ Բայց տրտնջալ ես մեկատար~~

ՀՀ Ազգային գրադարան
NL0352907

47092

ԲՈՒԿ ԽՈ 51
ԳՐԳԻՆ 20Ռ.

ԳԻՆՆ Է 30 ԿՈՊ.